

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆ ՀՕՐ Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱԿԱՆԱՏԵՄՆԵՐԸ



Կարդալ էջ 4

ՀՅԴ 21-րդ Գերագույն Ժողովի Ցայտարարությունը

ՀՅԴ Հայաստանի կազմակերպության 21-րդ Գերագույն ժողովը, քննելով Հայաստանի քաղաքական, ընկերային-տնտեսական իրավիճակը, ներքին և արտաքին ճակատների վրայ առկա մարտահրավերները, արձանագրում է:

Սահմանադրական փոփոխություններից բխող պետական կառավարման համակարգի փոփոխությունները և համապատասխան օրենսդրական կարգադրումները անհրաժեշտ նախադրելիքներ են ստեղծել մեր պետականության կայուն զարգացման համար:

Հայաստանի և Արցախի Հանրապետությունների անվտանգության հիմնախնդիրը շարունակում է մնալ հիմնական օրակարգ և թեկնածու է առաջնահերթ ռազմավարությունները պետական և հանրային կեանքի տարբեր սպարեզներում:

Եւրասիական տնտեսական միություն և Եւրոպական Միության հետ գործընկերային յարաբերությունների համադրմամբ բարենպաստ միջավայր է ստեղծել բազմաշառուիչ, փոխլրացնող արտաքին քաղաքականություն իրականացնելու, քաղաքական և տնտեսական բարեփոխումները արդիւնաւորելու համար:

Առ այդ, առաջիկայ երկամեայ ժամանակաշրջանի համար ՀՅԴ Հայաստանի Գերագույն ժողովը առաջնահերթ է համարում.

- Իրաւունքի գերակայութեան սկզբունքների լիարժեք իրացումը երաշխաւորող մարդու իրաւունքների ու ազատութիւնների ապահովման համակարգի ձեւաւորումը,

- Կայուն զարգացում ապահովող ընկերային շուկայական տնտեսական համակարգի ձեւաւորումը, ընկերային արդարութեան սկզբունքների պահպանման գործում պետութեան առաջնային դերակատարութեան ստանձնումը և նոր աշխատատեղերի ու եկամտաստեղծ գործունէութեան խթանումը,

- Հանրային կեանքի բոլոր ոլորտներում համակարգային և որակական փոփոխութիւնների իրականացումը, իշխանութեան մարմինների թափանցիկ,

ՀՅԴ... Ծար. էջ 5

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն Ցայտարարեց Իր Երեսփոխանական Թեկնածուները

«Միասնաբար՝ Ամբողջ Լիբանանի Համար»



Կարդալ էջ 3

Հարցազրույց Լիբանանի Զրօսաշրջութեան Ճախարար Աւետիս Կիտանեանի հետ

«Լիբանանի մէջ մեր կարողականութիւնն ու իսկակա՛ն՝ ներկայացուցչական հանգամանքը հաստատելու համար՝ պէտք ունինք արտերկրի լիբանանահայութեան զօրակցութեան»



Կարդալ էջ 3 (Լուսանկարը՝ Մայի Թաշեանի)

Komitas.ca
FUNERAL COMPLEX

Always standing by our community

PRE-PLANNING WITH 0% INTEREST
1, 3, 5 OR 10 YEAR PAYMENT PLANS

5180 Salaberry, Montreal, QC H4J 1J3
T 514.331.0400

2018 PILOT MSRP STARTING FROM \$40,390*

2018 PILOT SHOWN

* Taxes not included. Visit Honda Gabriel for more details.

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777
www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian



The Essence of Mediterranean Gourmet



*Taste Wonderful
Taste Arz Fine Foods*



ARZ Fine Foods
1909 Lawrence Ave E, Scarborough, ON (416.755.5084), www.arzfinefoods.com

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական Կոմիտեն Յայտարարեց Իր Երեսփոխանական Թեկնածուները «Միասնաբար՝ Ամբողջ Լիբանանի Համար» Կարգախօսին Լոյսին Տակ

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտեն հրաւերում է Մարտ 22-ին «Ազգակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին յայտարարուեցան ՀՅԴ-ի թեկնածուները, որոնք պիտի մասնակցին 2018-ի երեսփոխանական ընտրութիւններուն:

Թեկնածուներու յայտարարութեան կողքին ներկայացուցաւ նաեւ Հայ յեղափոխական դաշնակցութեան նախընտրական ծրագիրը՝ ներկայութեամբ ներկայ եւ նախկին նախարարներու, երեսփոխաններու, Կեդրոնական կոմիտէի անդամներուն եւ մեծ թիւով կուսակցականներու:

Խօսք առաւ երեսփոխան Բագրատունի, որ ողջունեց բոլորը՝ Լիբանանի թէ պիւնիկ մէջ, յայտնելով իր ուրախութիւնը ներկայ բազմութեամբ, որ կ'արտացոլացնէ Հիբանան հայրենիքը եւ նոր կեանքով ու աւելի յառաջդիմած երկրի մէջ ապրելու

յոյսը:

«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը հայրենիքին կուսակցութիւնն է: Աւելի՛ն. ան Լիբանանի ամէնէն հին կուսակցութիւնն է: Կուսակցութիւն մը, որ հաւատացած է հաստատութիւններուն, պետութեան եւ լիբանանեան օրինականութեան: Կուսակցութիւն մը, որ հաւատացած է մարդ անհատին, դրական չէզոքութեան, Լիբանանին՝ իբրեւ ժողովրդավարութեան եւ քաղաքակրթութեան, ազգային գոյակցութեան ու համերաշխութեան, մարդկային իրաւունքներու՝ հիմնուելով մարդկային արժէքներուն եւ ամէնէն առաջ մարդուն վրայ», ըսաւ ան:

Իր խօսքին աւարտին, երեսփոխան Բագրատունի յայտարարեց թեկնածուները. Յակոբ Բագրատունի՝ Մեթնի, Յակոբ Թերզեան, Ալեքսանտր Մաթոսեան եւ Սերժ Զուխատարեան՝ Պէյրութի Ա. ընտրաշրջան:



Ալեքսանտր Մարոսեան

Ալեքսանտր Աբրահամ Մաթոսեան ծնած է Պէյրութ, 1969-ին:

Ան «Ալ Մաշրեք» ապահովագրութեան եւ վերապահագրութեան ընկերութեան նախագահն է: Ան նաեւ կը ղեկավարէ Եգիպտոսի մէջ նոր հաստատուած «Միացեալ ապահովագրական ընկերութիւն»-ը: Լիբանանեան ապահովագրական ընկերութիւններու ընկերակցութեան խորհուրդի անդամ է: Ալեքսանտր Մաթոսեան մաս կը կազմէ ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի տնտեսական յանձնախումբին:



Յակոբ Թերզեան

Յակոբ Մարտիրոս Համբարձում Թերզեան ծնած է Պէյրութ, 1966-ին: Ան «Համբի 1921» ընկերութեան գործադիր խորհուրդի հիմնադիր եւ նախագահ է: Ինչ կը վերաբերի հանրային կեանքին, ան եղած է Լիբանանի հայոց թեմի Ազգային առաջնորդարանի բնակարանային յանձնախումբի անդամ՝ 2001-2014: 2012-2014 եղած է Ազգային վարչութեան անդամ: ՀՄԸՄ-ի միջոցով իր մասնակցութիւնը բերած է մարդկան կեանքին: Անդամ էր ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան: 2010-էն մինչեւ այսօր անդամ է Պէյրութի քաղաքապետական խորհուրդին:



Սերժ Զուխատարեան

Սերժ Յակոբ Զուխատարեան ծնած է Պէյրութ, 1976-ին: Անդամ դարձած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ սկսնակական միութեան եւ զանազան պաշտօններ ստանձնած է անոր մէջ: Սեն ժողովի համալսարանէն վկայուած է իբրեւ իրաւաբան: Իբրեւ փաստաբան 1998-էն անդամ է Փաստաբաններու սենտիքային: Տարիներէ ի վեր Հայկական երեսփոխանական պլոքի իրաւաբանական հարցերու խորհրդատու է: Ան երկու շրջանի համար Պէյրութի քաղաքապետական խորհուրդի անդամ եղած է եւ պարտականութիւն ստանձնած քաղաքապետական խորհուրդի իրաւական հարցերու յանձնախումբին մէջ:



Յակոբ Բագրատունի

Յակոբ Բագրատունի ծնած է Պէյրութ, 1956-ին: Ուսանած է քաղաքական գիտութիւններ՝ Պէյրութի ամերիկեան համալսարանին եւ Լիբանանեան համալսարանին մէջ: 1980-2000 եղած է Ազգային Սուրէն Խանամիրեան վարժարանի տնօրէն, իսկ 2000-2005՝ Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլեճի տնօրէն: 1986-էն սկսեալ մաս կազմած է ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի իրերայաջորդ կազմերուն: 2005-ին եւ 2009-ին ընտրուած է լիբանանեան խորհրդարանի անդամ՝ Մեթնի ընտրաշրջանէն: 2015-էն ի վեր ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ է:

Հարցազրոյց Լիբանանի Զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեանի հետ

«Լիբանանի մէջ մեր կարողականութիւնն ու իսկական ներկայացուցչական հանգամանքը հաստատելու համար՝ պէտք ունինք արտերկրի լիբանանահայութեան զօրակցութեան»

Հ.- Պարո՛ն նախարար, ինչո՞ւ յոյժ կարեւոր կը նկատէք արտերկրի լիբանանահայութեան մասնակցութիւնը Լիբանանի Խորհրդարանական ընտրութիւններուն:

Ա.Կ.- Նախ ըսեմ, որ Խորհրդարանական ընտրութիւնները մեզի համար, մանաւանդ այս նոր օրէնքով, շատ կարեւոր են, որովհետեւ առիթով պիտի ստեղծեն մեր թիւին համեմատ երեսփոխաններ ունենալու, այսինքն իսկական ներկայացուցչութեամբ ներկայանալու Խորհրդարան: Մենք 2000 թուականէն մինչեւ 2017, հակառակ գաղութի մեծաթիւ ըլլալուն եւ այդ թիւին 80 առ հարիւր Դաշնակցութեան հովանաւորութիւնը վայելելուն, մեր թեկնածուներէն միայն երկուքը յաջողած էինք հասցնել Խորհրդարան, որովհետեւ ընտրական օրէնքը չէր օգնէր: Այսօր ընտրական օրէնքը համամասնական է եւ մեզի առիթով կու տայ մեր ձայներով մեր թեկնածուները անցնելու: Նկատի առած որ վերջին 17-18 տարիներուն Լիբանանէն հեռացող լիբանանահայերուն թիւը բաւականին մեծ եղած է, որոնք մեծամասնութիւնը կը գտնուի Գանատա եւ Ամերիկա, հետեւաբար այս թիւէն եւ այս կարելիութենէն օգտուելով մենք կրնանք մեր կարողականութիւնը կրկին հաստատել. այս մէկը յաջողցնելու համար պէտք ունինք Սփիւռքին զօրակցութեան, մա-

նաւանդ որ ընտրական օրէնքը կարելիութիւնը ստեղծեց բոլոր արտերկրի լիբանանացիներուն գրանցուելու եւ մասնակցելու քուէարկութեան: Այո՛, հաւանաբար այդ աշխատանքը մեր ակնկալած թիւը չհասնուի, այդ իսկ պատճառով այս շրջապտոյտը կազմակերպուեցաւ՝ նախ ամրապնդելու գրանցուողներուն քուէարկութեան մասնակցութիւնը Ապրիլ 29-ին նաեւ սերտելու կարելիութիւններն ու միջոցները՝ յաւելեալ թիւ ունենալու:

Հ.- Ի՞նչ պատճառով եւ ի՞նչ նպատակաւ Լիբանանի ընտրական օրէնքը փոփոխութիւն կրեց եւ առաջին անգամ ըլլալով կարելիութիւն ընծայեց արտերկրի լիբանանացիներուն՝ մասնակցելու սոյն ընտրութիւններուն:

Ա.Կ.- Լիբանանի ընտրական օրէնքը մինչեւ 2009-ի ընտրութիւնները բաւականին անարդար էին, որովհետեւ օրէնքը մեծամասնական էր, այսինքն եթէ որեւէ շրջանի մէջ 100 հազար քուէարկող գոյութիւն ունի, եւ եթէ որեւէ կողմ կամ կուսակցութիւն 51000 քուէ ստանայ, այդ մէկ առաւել քուէին պատճառով այդ շրջանի բոլոր ձայները իրաւասու կը դառնան տուեալ կողմին կամ կուսակցութեան: Այս մէկը անարդար կը սեպուէր, հետեւաբար պէտք էր ձեւ մը ստեղծել, որպէսզի բոլոր

կողմերը իրենց չափին համեմատ ներկայացուած ըլլան: Այսօր համամասնական նոր օրէնքին համաձայն, եթէ տուեալ համայնք մը կամ կուսակցութիւն մը քուէներուն 50 առ հարիւրը ստանայ, ուրեմն ամբողջութեամբ կ'ընտրուի, միւսը 20 առ հարիւրը կը ստանայ, ուրիշ մը՝ 30 առ հարիւրը, այսինքն իւրաքանչիւր իր ստացած քուէին համեմատ ամբողջութեամբ իրաւունք կը ստանայ: Այսպիսով անարդարութիւնը նուազագոյնի կ'իջնէ, եւ իւրաքանչիւր կողմ իր չափին համեմատ ներկայացուած եւ մասնակցած կ'ըլլայ: Մեզի համար նոր օրէնքի ձեւ է այս, բայց յոյսով ենք, որ յատկապէս հայութեան ի նպաստ՝ դրական անդրադարձ կ'ունենայ:

Հ.- Պարո՛ն նախարար, այսօր ի՞նչ է պահանջուածը գաւառական ընդհանրապէս եւ Գանատա հաստատուած լիբանանահայերէն մասնաւորապէս:

Ա.Կ.- Այսօրուան պահանջուածը հետեւեալն է. Գանատա հաստատուած բոլոր այն լիբանանահայերը, որոնք մինչեւ Նոյեմբեր 20 արձանագրուեցան, պէտք է ունենան իրենց լիբանանեան անձնաթուղթերը, կամ ի զօրու անցագիրներ, որպէսզի կարենան քուէարկել: Եթէ չունին կամ այլեւս ի զօրու չեն իրենց անցագիրները, Կեդրոնական կո-

միտէին եւ դեպքանատան միջոցաւ կարելիութիւն պիտի ընծայուի իրենց հին անցագիրները նորոգելու՝ առանց յաւելեալ ծախսի: Ապա, անուշտ, մեր փափաքը եւ մեր խնդրանքն է, որ Ապրիլ 29-ին մեր հայրենակիցները քուէակեդրոն երթան եւ քուէարկեն: Երկրորդ ծրագրի մը մասին ալ կը մտածուի. մենք գրանցուողներու աւելի մեծ թիւ կ'ակնկալէինք, առաւել ներքին համաձայնութիւն մը գոյութիւն ունէր ժամկէտը (Նոյեմբեր 20 եւ ապա Յունուար 20, որպէսզի աւելի մեծ թիւ կարենայինք ապահովել. այդ միջոցին, Նոյեմբեր 4-ին Լիբանանի վարչապետ Հարիրին Ալեւտական Արաբիոյ մէջ անակնկալ հրաժարական ներկայացուց, ապա Լիբանան վերադառնալով իր հրաժարականին անվաւերութիւնը յայտարարեց, հետեւաբար այս իրադարձութիւններուն պատճառով կարելի չեղաւ երկարաձգել արձանագրութիւններու ժամկէտը: Այսօր այս դժուարութեան դէմ յանդիման կը գտնուինք եւ նոր միջոցներ կ'որոնենք, որպէսզի 2000-2500 յաւելեալ քուէն կարենանք ապահովել՝ մեր նպատակին հասնելու եւ մեր թեկնածուները յաջողցնելու:

Հարցազրոյցը վարեց Սոնա Թիթիզեան

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ Ս. ԶԱՏԿՈՒԱՅ ՊԱՏԳԱՄԸ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱԿԱՆԱՏԵՄՆԵՐԸ

«Մաքր կլանուեցաւ. յաղթանակը շահուեցաւ» (Շապի 25. 8):

Մարգարէներու կանխասացութիւնը իրականացաւ, «Մաքր կլանուեցաւ, յաղթանակը շահուեցաւ» (Շա. 25.8): Այժմ մաքր նուաճուեցաւ կեանքով, եւ ահա՛ Յարութեան աւետիսն է, որ կը հնչէ ամէնուրեք:

Իր աւարտին հասաւ քառասորեայ պահպանութեան ինքնապատրաստութեան եւ ինքնասրբազրման ժամանակաշրջանը:

Իր աւարտին հասաւ մեր հայրերուն կողմէ սահմանուած հաւաքական, հոգեւոր ուղեւորութեան ճանապարհորդութիւնը:

Սեւը, սուգը, խաւարը վերացուեցան մեր եկեղեցիներէն: Վարպուրը բացուեցաւ մեղաւոր մարդուն առջեւ, ըմբոշանելու իսկական ու վաւերական ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը:

Քանդուեցաւ մարդուն եւ Աստուծոյ միջեւ կանգնած պատնէշը, եւ արտօնուեցաւ անառակ մարդուն վերդառանալ իր հօր բնակարանը, ապրիլ ուրախութիւնը աստուածատեսութեան, եւ արժանի ըլլալ ընդմիջու բնակութիւն հաստատելու արբութեան տաճարին մէջ:

Մէկ խօսքով իւրաքանչիւր հաւատացեալին առջեւ բացուեցաւ յոյսի դուռը: Խաւարը անցաւ ու երեւցաւ ճշմարիտ լոյսը: Գլորուեցաւ գերեզմանի մուտքին դրուած քարը, գերեզմանը թափուր մնաց... Լսուեցաւ հրեշտակին աւետարեք ձայնը. «Այստեղ չէ, այլ յարութիւն առաւ»:

Սրբուեցան արցունքները բարեպաշտ եւ իւղաբեր կանանց. անոնք յարուցեալ Փրկչին առաջին ակնատեսները եղան ու լսեցին պատգամը անոր. «Մի՛ վախճաք, գացէք եւ ըսէ՛ք իմ եղբայրներուս՝ որ Գալիլիա երթան. հո՛ն պիտի տեսնեն զիս» (Մտ 28.10):

Յարուցեալ Փրկիչը իր խոստումը կատարեց. նախ երեւցաւ Պետրոս առաքեալին, այնպէս ինչպէս Ղուկաս Աւետարանին մէջ կը կարդանք. «Իրապէս որ Տէրը յարութիւն առաւ եւ երեւցաւ Սիմոն» (Ղկ 24.34): Ապա երեւցաւ իր մնացեալ տասնմէկ աշակերտներուն՝ Գալիլիոյ մէջ, նոյն իր յարուցեալ մարմ-

նով, - անոնց մէջ կանգնելով ըսաւ. «Խաղաղութի՛ւն Ձեզի: Ես եմ, մի՛ վախճաք» (Ղկ 24.36): Անոնց անգամ մը եւս յիշեցուց Սուրբ Գիրքերուն մէջ մարգարէացուածը թէ Մեսիան ինչպէս «Պէտք է չարչարուէր եւ երեք օր յետոյ յարութիւն առնէր. անոր անունով ապաշխարութիւն եւ մեղքերու թողութիւն պէտք է քարոզուէր բոլոր ժողովուրդներուն՝ Երուսաղէմէն սկսեալ»: Շարունակելով իր խօսքը ան ըսաւ. «Դուք այս բոլորի վկաններն էք...» (Ղկ 24.46-48): Յիսուս քաջալիբեց, զօրացուց եւ զիրենք զրկեց իր սորվեցուցած պատուիրանները ուսուցանելու բոլոր ժողովուրդներուն եւ վերջաւորութեան ըսաւ. «Ահա ես միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհի վախճանը» (Մտ 28.20):

Ան երեւցաւ նաեւ աւելի քան հինգ հարիւր հետեւորդներու, երեւցաւ Յակոբոսին՝ Տեառնեղբօրը, երեւցաւ Էմմաւուսի ճամբորդներուն, եւ ապա ի վերջոյ՝ Պօղոս առաքեալին, որ հալածիչ էր, բայց դարձաւ տարածիչը Քրիստոնէութեան (Ա.Կր 15.6-8):

Այժմ՝ Քրիստոս յարութիւն առաւ մեռելներէն, այս է ճշմարտութիւնը եւ ամենամեծ ուրախութիւնը, աւետիսներուն աւետիսը բոլոր ժողովուրդներուն:

Այսօր քանի՛ դար անցած է յարութեան դէպքէն: Այսօր դարձեալ ժամադրուած ենք հանդիպելու իրար, յիշելու յարութիւնը Քրիստոսի: Ինչո՞ւ որովհետեւ ան կենդանի է, եւ բնականօրէն կարելի չէ մոռնալ նման դէպք մը՝ զոհողութեամբ, ինքնընծայումով թաթաւուն մեծ յաղթանակի հռչակման՝ համայն մարդկութեան մեղքերու քաւութեան եւ թողութեան համար: Այժմ, Ան խաչուեցաւ ու թաղուեցաւ, սակայն թաղուած չմնաց, այլ երրորդ օրը յարութիւն առաւ մեռելներէն: Ան վերստին կենդանացաւ ու նոր կեանք բաշխեց բոլոր անոնց, որոնք հաւատացին անոր:

Պատկերացուցէք, որ այս առաւօտ պիտի չհանդիպէի՛նք, պատճառ պիտի չունենայինք իրարու հետ ըլլալու սրբավայրի մը մէջ, տօնելու յաղթանակը, վանելու խաւարը, տեսնելու լոյսը ճշմար-

իտ, եթէ Քրիստոս կենդանի չըլլար:

Քրիստոսի յարութեան ժամանակ մենք անձամբ ակնատեսները չեղանք, թէ ինչ պատահեցաւ. արդեօք կը հաւատա՞նք յարութեան մեր ամբողջ սրտով: Յարուցեալ Փրկիչը մեզի չերեւցաւ, մեզի չտեսնուեցաւ ու մենք չհանդիպեցանք իրեն, արդեօք կը հաւատա՞նք իր հրաշափառ յարութեան: Ահաւասիկ ամենակարեւոր հարցումը, ուղղուած այսօր մեզմէ իւրաքանչիւրին: Պատմութեան ընթացքին եղան մարդիկ, որոնք ըսին. «Մեռելներու յարութիւն չկայ», «Մեռելները յարութիւն չեն առներ», միաժամանակ չհաւատացին Քրիստոսի յարութեան. նման վերաբերմունք մէկ բան կը նշանակէ, որ անոնք մնացին մեղքերու մէջ ընկղմած:

Այսօր մե՞նք ինչ կ'ընենք, Թովմասեան շօշափելիութեամբ կը մօտենանք, թէ հիմնուած Յիսուսի խօսքերուն ստուգութեան եւ խոստման՝ հաւատքի վրայ, հաւատքի աչքերով ակնատեսները կը դառնանք ճշմարիտ ու վաւերական լոյսի ճառագայթումին, Քրիստոսի՝ մեր Փրկչին հրաշափառ յարութեան: Այսօր մենք քանի՛ քանի՛ վկայութիւններ ունինք հաւատալու Քրիստոսի յարութեան. իւղաբեր կանանց վկայութիւնը թափուր գերեզմանի մասին. Յարուցեալ Փրկչին եւրեւումը ոչ միայն անմիջական աշակերտներուն, այլ աւելի քան հինգ հարիւր հետեւորդներու, սա մեծ թիւ է, համոզուելու արժանահաւատ, հաւատարիմ եւ վստահելի անձանց ակնատեսի վկայութեան:

Այս բոլորէն ետք Պօղոս առաքեալ յստակ կերպով կը յայտարարէ. «Բայց ո՛չ. Քրիստոս արդարեւ մեռելներէն յարութիւն առած է» (Ա. Կր 15.20):

Այժմ, ան յարութիւն առաւ մեռելներէն եւ իր յարութեամբ մեզի երաշխիք տուաւ մեր իսկ յարութեան, յաւիտեան կեանքի ուրախութեան եւ փրկութեան: Ան սորվեցուց մեզի, որ յոյս ունենանք մահէն յետոյ յարութիւն առնելու: Պօղոս առաքեալի բառերը շատ գեղեցիկ են ու պատկերաւոր, Քրիստոս՝ «Ննջեցեալներու առաջին պտուղն է»:

Առաջին մարդով՝ Ադամով մահը մուտք գործեց աշխարհ, իսկ երկրորդ՝ Ադամով՝ Քրիստոսով յոյսը տրուեցաւ նոր կեանքի, յարուցեալ կեանքի՝ յաւիտեան կեանքի:

Թափուր գերեզմանը ուրախութեան մնալուն աղբիւր եղաւ անոնց՝ «Ակնատեսներուն», որոնք ճանչցան Քրիստոսին, որպէս Տէր եւ յարուցեալ Փրկիչ: Ո՛չ ոք կրնայ ճշմարտութիւնը թաղել, ո՛չ քար գլորելով գերեզմանին վրայ եւ ո՛չ ալ կընքելով: Աստուած պիտի յաղթէ, եւ մենք կրնանք այնտեղ ըլլալ, ակնատեսները ըլլալ նոր աշխարհի, աւելի լաւ ու ճշմարիտ աշխարհի պատրաստութեան:

Ահաւասիկ հրաւէր մը ուղղուած ինձի եւ քեզի՝ մեր բոլորին, ոտքի ելլենք ու միասին քալենք Քրիստոսի կողմէ պատրաստուած եւ նորոգուած կեանքի մէջ:

Հայ ժողովուրդը առաջին ակնատես ժողովուրդը եղաւ, որ հաւատաց Քրիստոսի յարութեան եւ անոր պատրաստած նոր, ճշմարիտ ու վաւերական կեանքին: Տառապեցաւ, չարչարուեցաւ, փոթորկներու հանդիպեցաւ, նոյնիսկ Յեղասպանութեան ենթարկուեցաւ, բայց չզդարեցաւ ակնատեսի իր վկայութիւնը բերելէն, միշտ հաւատալով Քրիստոսի յարութեան՝ վաղուան արշալոյսին, նոր կեանքին, յարութեան հրաշափառ յաղթանակին:

Հարիւր տարի անցած է Հայաստանի Առաջին Անկախ Հանրապետութեան ստեղծումէն, հակառակ անոր որ երկար չտեսեց, բայց յաղթանակ ապահովեց, յոյս ներնչեց ու ոգի ներարկեց գալիք բոլոր սերունդներուն, բոլոր ազատագրական պայքարներուն եւ այսօրուան վերանկախ Հանրապետութեան ստեղծ-

ԱՌԱՋՆՈՐԴ... Ծար. էջ 5
ԲԱԲԳԷՆ ԱՌՔ. ԶԱՐԵԿԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

CIBC

Aline Shnorhokian
Mortgage Advisor

Tel: 1 866 231-8876
Fax: 450 688-7555
Cell: 514 797-1375
aline.shnorhokian@cibc.com



Groupe Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Claire, QC H9R 4Z7

Sutton

ALBERT ARKILANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

aarkilianian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596

Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!

NISSAN | **VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS** | **HONDA**

GABRIEL | **GABRIEL**

Kevoork Asadourian
Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned

kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

École De Conduite

AZIG Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan

NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

nat.skaff@gmail.com
Tel: (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7

Services available in Armenian, Arabic, English and French

BRING YOUR OWN WINE

NAZARETH
CLASSIC GRILL

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644

AUTO SAMSON

MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.



RE/MAX

ՀԱՅԿ ՑԱՐԹՈՒՆԵԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

C 514.574.6162
B 514.333.3000



NETTOYEUR MARIE-CLAIRE

CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)

2535 de Salaberry, Montréal | Tél: 514.334.7830



«Կանանց Միջազգային օր»ուան տոնակատարություն

Կազմակերպությանը Հայ Օգնութեան Միութեան Մոնթրէալի «Սօսէ» եւ Լաւալի «Շուշի» մասնաճիւղերուն, Կիրակի, 11 Մարտ 2018-ին տեղի ունեցաւ արդէն իսկ աւանդութիւն դարձած «Կանանց Միջազգային օր»ուան տոնակատարութիւնը: Ձեռնարկը նուիրուած էր Հայ ժողովուրդի պատմութեան ականաւոր կին դէմքերէն Սօսէ Մայրիկին մահուան 65-րդ տարելիցին: Օրուան նախագահն էր ԸնկՏ. Աննա Փրիլիկեան, իսկ պատգամաբերը՝ ԸնկՏ. Տիրուկ Մանճիկեան:

Առաւօտեան ժամը 10:30-ին, Լաւալի Embassy Plaza-ի շքեղ սրահին դռները բացուեցան ընդունելու համար աւելի քան 420 մասնակիցներ: Տեղին է նշել, որ մեծ թիւով կիներու կողքին, այս նախաձեռնութեան մասնակից էին նաեւ յատկանշելի թիւով այրեր, նաեւ պարման-պարմանուհիներ:

Ճոխ նախաճաշի սպասարկումէն ետք, յայտագրին պաշտօնական բաժինը սկսաւ Գանատայի, Հայաստանի եւ ՀՕՄ-ի քայլերգներով, որոնցմէ ետք, օրուան հանդիսավար ԸնկՏ. Նայիրի Եմէնիճեան, ջերմօրէն ողջունեց ներկաները: Ան իր բացման խօսքին ընդմէջէն բացատրեց, որ Մարտ 8-ն կը խորհրդանշէ կանանց ընկերային, տնտեսական, մշակութային եւ քաղաքական նուաճումներու օրը: Ան ներկայացուց այս տօնին պատմականը համաշխարհային առումով, յիշեցնելով որ կիները դարեր շարունակ պայքար մղած են իրենց գոյութիւնն ու դերակատարութիւնը հասաստելու ընկերութեան մէջ: Վերջապէս, ԸնկՏ. Նայիրին կեդրոնացաւ Հայ կանանց առաքելութեան ու ներդրումին, եւ մասնաւորապէս Սօսէ Մայրիկին անձնագիտութեան ցայտուն օրինակին վրայ: Ապա, օրուան պատգամաբերին համապարփակ կենսագրական գիծերը ներկայացնելէ ետք, բեմ հրաւիրեց ԸնկՏ. Տիրուկ Մանճիկեանը:

ԸնկՏ. Տիրուկ Մանճիկեան իր անձնական զգացումներէն ու տեսանկիւնէն մեկնած յայտնեց, թէ Սօսէ Մայրիկը հմայած ու ներշնչած է Հայ կինը տարիներէ ի վեր: Ապա, ան առիթը տուաւ Բալիկ Լատոյեանին, Եղբարդ Տարօնեանին «Պատմութիւն Տարօնի Աշխարհին» գրքէն քանի մը խօսք արտասանելու Սօսէի լեզուով, իր մանկութեան, Սերոր Աղբիւրի ծանօթանալուն եւ



պսակուելուն յուշերէն: Բեմ բարձրացաւ նաեւ Անահիտ Պալեան, որ մեկնարանեց Յովհաննէս Թումանեանի «Հայու գիշեր, անհուն գիշեր» բանաստեղծութիւնը:

Իր պատգամին երկրորդ բաժինին մէջ, ԸնկՏ. Մանճիկեան արծարծեց այդ ժամանակուան տիրող հոգեբանութեան եւ ստրկութիւնը թօթափելու անհրաժեշտութեան հարցը: Ան ընդգծեց, թէ Հայ ֆետային ու իր ամուսինը կողք-կողքի պաշտպանեցին ո՛չ միայն իրենց տունը, այլ մեծ թիւով երիտասարդներու աջակցութեամբ, անոնք ծառայեցին «սուրբ գործին»: Ընկերուհին ներկայացուց զոյգին եւ իրենց զաւակներուն դիմագրաւած բոլոր դժուարութիւնները, մինչեւ Սերորի հանդէպ գործադրուած դաւաճանութիւնն ու մահը:

Ան խօսքը փակեց՝ անդրադառնալով Սօսէի կեանքի դաժան տարիներուն Սերորի մահէն ետք, յիշելով իր բանտարկութիւնը, հալածանքը, ակամայ Եգիպտոս, Աղեքսանդրիա փոխադրուելը եւ ի վերջոյ մահը, սրտին ունենալով իր ընտանիքի կորուստի խոր ցաւը եւ իր հայրենի հողէն հեռու ըլլալուն վիշտը: Պատգամի աւարտին Թայրա Ճապրայեան արտասանեց Աշոտ Գրիգորեանի «Սօսէ

Մայրիկ» բանաստեղծութիւնը, որմէ ետք ցուցադրուեցաւ տեսերիկ մը, որուն ընդմէջէն ներկայացուեցաւ 28 Մայիս 1998-ին Հայաստանի Առաջին Հանրապետութեան 80-րդ տարեդարձին առթիւ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան եւ Հայաստանի կառավարութեան նախաձեռնած Սօսէ Մայրիկին աճիւններուն տեղափոխութիւնը դէպի Հայրենիք:

Ընկերուհի Տիրուկ իր խօսքը աւարտեց հետեւեալ պատգամով. «Սօսէ՛ Մայրիկ, դուն մայր ամբողջ Հայութեան, իջի՛ր այսօր մեր հոգիներուն մէջ, իջի՛ր ու մեզի սորվեցուր տոկալ եւ դիմանալ այս օրերու դժուարութիւններուն: Սորվեցո՛ւր մեզի պահել մարդկային ու ազգային արժէքները, սիրել մեր լեզուն ու մշակոյթը ու դառնալ քեզի նման անձնուրաց, համբերող, պատուասինդիր կին ու մայր: Կանանց միջազգային օրուան առթիւ դուն եղիր ներշնչման աղբիւր մեր բոլորին ու քու օրինակելի կեանքդ, հայրենասիրութիւնդ, քաջութիւնդ եւ հաւատարմութիւնդ թող ըլլան Հայ կինը առաջնորդը ձաճանչող փարոսները:

Գեղարուեստական յայտագիրը աւարտեցաւ հանրածանօթ երգիչ Էլի Պէրպէրեանի մասնակցութեամբ, որ մեկ-

նաբանեց «Սերորի եւ Սօսէի», ինչպէս նաեւ «Ձայն մը հնչեց» երգերը:

Կազմակերպիչ յանձնախումբի առաջարկով եւ զոյգ մասնաճիւղերու վարչութեանց համամտութեամբ, որոշուած էր պատուել նաեւ ներկայիս աշխոյժ ու գործունեայ ՀՕՄ-ուհիներ: Ընկերուհիներ Անի Թաշճեան եւ Աննա Պուլկարեան յաջորդաբար ներկայացուցին կենսագրականները երկու անձնուէր ընկերուհիներու՝ Արմինէ Կարապետեանի եւ Աննա Փրիլիկեանի, որոնցմէ իւրաքանչիւրին յանձնուեցաւ յուշանուէր՝ ի պատիւ իրենց տարիներու անսպառ ծառայութեան, աշխատանքին ու նուիրումին:

Վերջապէս, ցերեկոյթը աւարտեցաւ ՀՅԴ «Դրօ» եւ «Գետաշէն» պատանեկան միութիւններուն անակնկալ ելոյթով: 31 պատանիներ սրահին երկու կողմերէն, ժողովուրդը ճեղքելով դէպի բեմ յառաջացան եւ երգեցին «Սերորի եւ Սօսէի» նուիրուած երգը եւ «Ձարթիր Լաօ»ն:

Հանդիսավար ԸնկՏ. Նայիրի Եմէնիճեան, յուզումով զիրենք կոչեց «Սօսէ Մայրիկին ծառայողները...»:

Քաղկ Լատոյեան (Լուսանկարները Արմէն Ալեմեանի)

Սկիզբը էջ 5

հաշուետու եւ արդիւնաւէտ աշխատանքը, հակափտածութիւն քաղաքականութեան աշխուժացումը,

- Հասարակութեան մէջ պետութեան եւ ապագայի հանդէպ վստահութեան հիմքերի ստեղծումը,
- Երկրի առաջնային զարգացման ռազմավարական տեսլականի մշակումը եւ դրանից բխող ծրագրերի իրագործումը,
- «Ազգ-բանակ» Հայեցակարգի ամբողջական գործադրման եւ ռազմարդիւնաբերական համակարգի զարգացման նախադրեալների ստեղծմանն աջակցումը,
- Աշխուժ ժողովրդագրական քաղաքականութեան իրականացման ուղղութեամբ թիրախաւորուած ու գործուն քայլերի ձեռնարկումը եւ արտագաղթի կասեցումը:

Մեկնելով այս հաստատումներից եւ առաջնահերթութիւններից՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակի շեմին ՀՅԴ Հայաստանի կազմակերպութիւնը վերահաստատում է իր կամքն ու վճռականութիւնը հետեւողական եւ ամէնօրեայ աշխատանքով նպաստելու մեր պետականութեան հետագայ զարգացմանը, մեր ժողովրդի անվտանգ եւ արժանապատիւ կեանքի պայմանների ապահովմանը:

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԺՈՂՈՎ

ԱՌԱՋՆՈՐԴ... Սկիզբը էջ 4

ման: Հարիւր տարի յետոյ հայութիւնը նոյնն է, չէ փոխուած ու երբեք պիտի չփոխուի, ընդհակառակը պիտի շարունակէ հաւատալ Քրիստոսի յարութեան, իր իսկ յարութեան, յաղթանակի արշալոյսին, արդարութեան յաղթանակին:

Չկորսնցնենք յոյսը արդարութեան, չկորսնցնենք յոյսը յաւիտեական կեանքի, չկորսնցնենք յոյսը այն մեծ ուրախութեան, որ փրկութիւնն է:

Ճիշդ է, որ մեր ժողովրդի ճանապարհը դիւրին չեղաւ, յաճախ Գողգոթայի ճանապարհի վերածուեցաւ, բայց այսօր դարձեալ քրիստոսանուէր մեր նահատակներու պատգամն է որ կ'արձագանգէ իւրաքանչիւրիս եւ բոլորիս սրտերուն եւ մտքերուն մէջ՝ շարունակել ականատեսները մնալ Բանին ճշմարտութեան, Արդարութեան արեգակին, հաւատալ Քրիստոսի հրաշափառ յարութեան, ինչպէս նաեւ մեր ժողովուրդի՝ Հայ ժողովուրդի յաւերժ յարութեան՝ անմահութեան:

Մահը յաղթուած է մեզի համար, մահուան սարսափը՝ փարատած: Անմահութեան հաւատքն է, որ թեւ ու թուիչք առած է: Միայն չԱԻԱՏԱՒ ժողովուրդ հայոց եւ անվարան յայտարարէ. «Փառք Հրաշափառ Յարութեան Քո Տէր»:

* * *
Քրիստոս յարեաւ ի մեռելոց:
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:
Սիրոյ ջերմ ողջունիւ՝
Ս. Զատիկ

Այցելեցե՛ք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցե՛ք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը

HITUNES.CA


Ունկնդրեցե՛ք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռադիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցե՛ք շահեկան հարցազրոյցներ

TRIKTRAK.CA

Այցելեցե՛ք Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ կայքէջը՝

www.sourphagop.net

Տաճկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ - ԺԱ.



3. Բուլանուխ-Մալազկերտի շրջանը, մեր ազատագրական արշաւանքի տեսակէտէն, կը դառնար խիստ կարեւոր կեդրոն մը: Թէեւ ուսական խոշոր ուժեր կեդրոնացած էին այդ ճակատի վրայ, սակայն անոնք մեր անմիջական նպատակներուն ընդառաջ չէին երթար: Քօսուրի լեռնաշղթայի շարք մը կարեւոր դիրքեր կ'իշխէին Մշոյ դաշտի վրայ: Յանդուգն ներխուժում մը, բաւական պիտի ըլլար, ոչ միայն ազատելու այդ հոծ հայութիւնը, այլ նաեւ կազմակերպուած նոր ուժ մը հրապարակ բերել ընդդէմ թուրքերուն, որոնք կռնակէ զարնուած՝ չփոթովեան պիտի մատնուէին: Կռիւները դանդաղ կը զարգանային:

Բուլանուխ-Մալազկերտի մօտ 34,000 հայութիւնը ազատուած էր: Թրքական ջարդի ծրագիրը յղացուած ու գործադրութեան դրուելու վրայ էր, երբ ուսական բանակի անակնկալ եւ արագ արշաւանքն այդ ծրագրի գործադրութիւնը ջուրը կը ձգէր: Երկու գիւղեր, թրքական վերջին օրերու ջղայնութիւններէն եւ բացայայտ կոտորածէն խուսափելու համար կ'ապաստանին Եփրատէն գոյացած փոքրիկ կղզեակի մը վրայ ու կը դիմադրեն: Ձանազան վայրերէ, փախստական անհատներ հոն կ'ապաստանին: Ուրիշ քանի մը գիւղեր, որ կ'իյնային Քօսուրի կողմը, աւելի մօտ Մշոյ դաշտին, ենթարկուեցան կոտորածի, թրքական նահանջող ուժերու կողմէ: Այս դէպքերէն զատ, համեմատած ուրիշ շրջաններու հետ, առանց մեծ ցնցումներու, Բուլանուխ-Մալազկերտի հայութիւնը թրքական լուծէն կ'ազատուէր եւ ազատ շունչ կը քաշէր: Սակայն ժողովուրդի շատ չնչին տոկոսը միայն գէնք ունէր, եւ այն ալ ազատ իրաւունք չունէր կրելու: Այդ ճակատի վրայ, հայ կամաւորական գունդ չկար, ու հետեւաբար, անհնարին էր յայտնի գրինել հայ հասարակութիւնը, որպէսզի, նեղ ինկած պարագաներուն, իր գլխու ճարը տեսնէր:

Այսպիսով, Վան հաւաքուած ղեկավարները երկու ուղղութեամբ կը մտահոգուէին Բուլանուխ-Մալազկերտի մասին: Առաջին, որ այդ շրջանի համար ստեղծուի հայկական վարչութիւն մը: Այն ինչ որ կարգադրուած էր Վանի համար, չէր գործադրուած այդ գաւառակներու մէջ: Թուսական զինուորական իշխանութիւնը այդ տեղը նկատած էր անմիջական պատերազմական վայր, ու հետեւաբար՝ քաղաքացիական իշխանութիւն մը, այն ալ հայկական, չէր ուզած ստեղծել: Չորրորդ գորպուկի բռնած տարածութեան վրայ, Ախլաթէն մինչեւ Խնուսի դռները հայ կամաւորներ չկային, ու այսպիսով կը դժուարանար հայերու յարաբերութիւնը այդ զօրամասերուն հետ:

Սակայն Չօր. Օգանովսքու (որ գորպուկի հրամանատարն էր), կեդրոնական սպայակոյտի մօտ կը մնար Տիգրան Դեւոյեան, հետախուզական խիստ կարեւոր պաշտօնով: Տիգրան Դեւոյեանի պաշտօնի բերումով, ինչպէս նաեւ Կովկասէն հասնող գաղթականութեան օգնող մարմնի իրաւունքներու շնորհիւ, շարք մը հայ տղաներ կրնային զինուած պատիլ: Տիգրան Դեւոյեան բացի իր պաշտօնական պարտաւորութիւններէն, Ազգային Բիւրոյէն եւ Դաշնակցութեան Բիւրոյէն յանձնարարութիւններ ունէր կապուել Մշոյ եւ Սասնոյ ուժերուն հետ. գիտակ պահել զանոնք կատարուած շարժումներուն եւ անոնցմէ ստացած տեղեկութիւնները հաղորդել իրենց մարմիններուն: Լուրիսայն կը հասկցուէր, անշուշտ, որ Տիգրան Դեւոյեան ամէն ջանք պիտի թափէր, որ ուսական բանակը տրամադրուէր յառաջ խաղալու: Մինչ այս ակնկալիքներն ունէին Տ. Գեւոյեանէն, երբ բազմաթիւ բողոքներ կը հասնէին անոր մասին:

Արդ, Բուլանուխ-Մալազկերտի վարչական կազմակերպութեան գործով եւ Տ. Դեւոյեանի զինուորական միտքով հետաքրքրուելու եւ դրական հետեւանքի մը հասնելու համար, խուժ մը գործիչներ(10) Վանէն ճամբայ ելան դէպի Մալազկերտ, որ երկու գաւառներու կեդրոնն էր:

Հոդ կը գործէր գաղթականական մարմին մը: Ա.

Շարաֆեանի ղեկավարութեամբ: Թուսական գրաւումէն քանի մը շաբաթ յետոյ, Գաղթ. Կեդրոնական Կոմիտէի կողմէ Ա. Շարաֆեան խուժ մը աշխատակիցներու հետ անմիջապէս հասած էր Մալազկերտ ու կրցած էր կազմակերպել անդառու կայաններ եւ բժշկական անհրաժեշտ օգնութիւնը: Շարաֆեան բացի իր հետ բերած գործիչներէն, տեղի հայութեան մէջ կը գտնէր տեղական ուժեր, ինչպիսիքն են Միհրան Գրիգորեան, Մ. Դարմանման, Արշ. Մանուկեան, Մ. Խաչատուրեան, Օհանէս Թէրլոյեան եւ ուրիշներ, որոնք ջերմօրէն կը լծուէին ժողովրդին օգնելու գործին:

Վանէն հասնող գործիչները գաղթականական գործի մէջ կ'օգնէին Շարաֆեանի խուժին եւ այս միացեալ ուժերը թէեւ կը ճանչցուէին որպէս օգնութեան մարմիններ, սակայն իսկութեան մէջ Հայ ժողովրդի վերաբերեալ բոլոր գործերը կը կարգադրէին: Տեսակ մը վարչութիւն, որ գաղթականական գործերէն կը բխէր, բայց հետզհետէ պիտի դառնար այդ գաւառներու ազգային իշխանութիւնը:

Ամենէն մտահոգիչը զինուորական կացութիւնն էր: Յառաջադրացումը կ'ուշանար, մինչդեռ Սասունէն եւ Մուշէն ստացուած լուրերը ցոյց կուտային որ Տարօնի մէջ հրդեհը բռնկուած էր: Դեւոյեանը ճիշդ այդ օրերուն ստացած էր չորի կտորի վրայ գրուած ծածկագիր նամակ մը Փափագեանէն, եւ Թուրքիէն: Անոնք կը գրէին, Սասնոյ կռիւներու մասին եւ կը յայտնէին թէ՛ հաւանական ընդհանուր բռնկումի մը պարագային՝ իրենք միայն ուժ օր պիտի կրնային դիմանալ: Եթէ այդ կարճ միջոցին ուսական գործերը եւ կամաւորները չհասնէին, հայութեան ամբողջ ռազմամթերքը պիտի վերջանար եւ ժողովուրդը կոտորուէր: Այդ ընդարձակ նամակը դրուութիւնը խիստ լարուած կը ներկայացնէր. ան սրտառուչ կոչ մըն էր Տարօնի օրհասական կռուին օգնելու համար: Կային գործնական կարգադրութիւններ: Անոնք կը խնդրէին որ պահակներ ունենանք Նէմրուտի գագաթին, եւ կրակ վառենք հոն, որպէսզի Սասնոյ լեռներէն նշմարուին բոցերը, իբր ազդանշան, սկսած ընդհանուր յարձակողականին: Իսկ իրենք Սասնոյ լեռներու վրայ պիտի վառէին երկու խոշոր կրակներ, ի նշան օրհասական կռուին: Ծածկագրի համար կը թելագրէին նկատի ունենալ «Բլբուլ թող չերգէ Մշոյ դաշտերում» երգի այսինչ տունները:

Բազմահազար արծիւներու աչքերը ջուր կտրեցան հեռաւոր Նէմրուտի ակնկառոյց, բայց Նէմրուտի գագաթէն հրդեհ լեզուները չխօսեցան... Ու «Բլբուլը այլեւս չերգեց Մշոյ դաշտերում»...

Վանէն Մալազկերտ հասնող յանձնախումբը դժգոհ մնաց Դեւոյեանի գործելակերպէն եւ մանրամասն զեկուցում ներկայացուց Վանի ղեկավար ընկերներուն: Բայց ժամանակը կարճ էր. ճակատի ընդհանուր կացութիւնը մէկէն ի մէկ կը փոխուէր: Խնուսի կողմէն թրքական բանակը ուժեղ յարձակողականի մը կը սկսէր ուղղակի Մալազկերտի դէմ, կողէն հարուածելով Չօր. Օգանովսկու բանակը: Մինչդեռ կամաւորական գունդերը գրաւած էին արդէն Վանի լճի ամբողջ եզրերը, ու հնարաւորութիւն ստեղծած էին ուսական յառաջապահ գօզաքներու համար, ներխուժելու դէպի Մշոյ դաշտը:

Առանց Բիթլիզը գրաւելու, ուսական գօզաքներու թեթեւ զօրամաս մը սրարշաւ կը մտնէր Չխուրի շրջան (Վարդէնիս, Մշոյ դաշտ) եւ կ'առաջանար մինչեւ Մառնիկ: Սակայն նոյն արագութեամբ ետ կը նահանջէր, իրեն հետ ազատելով Չխուրի շրջանի հայութիւնը: Չխուրի շրջանի կռուող ուժերը Հասրաթի եւ Մարտիրոսի ղեկավարութեամբ, ամիսներ առաջ, ապաստանած էին իրենց շրջանի ճահիճներու մէջ, ու դժնդակ պայմաններու տակ, կռուած էին թրքական ուժերու դէմ: Թուսական բանակի յառաջապահներու արագ նահանջը տեսնելով՝ իրենց շրջակայ քանի մը գիւղերու (Վարդէնիս, Արտոնք, Ղարս եւն.) ամբողջ բնակչու-

թեան հետ ճամբայ կ'ելնեն, ու միայն Ախլաթի եւ Արճէշի միջեւ կը հասնին Դրոյի եւ Անդրանիկի գունդերուն եւ անոնց հետ կը նահանջեն դէպի Երեւան:

Թրքական յարձակողականը երեւոյթապէս շատ ուժեղ էր եւ նպատակ ունէր անցնիլ Եփրատը, գրաւել Միփանը եւ Ալազաղի փեշերը, մինչեւ Զիլան, ու կտրել ուսական բանակի թիկունքը: Տ. Դեւոյեան, որ Չօր. Օգանովսքու կեդրոնական սպայակոյտի կից հետախուզական բաժինը կը վարէր, իր զեկուցման մէջ թրքական յարձակողական բանակի ուժը ներկայացուցած էր մօտ 70,000 հոգի: Այդ տուեալները ցոյց կուտային որ Բուլանուխ-Մալազկերտի ուսական բանակը չպիտի կրնար դիմագրաւել այդպիսի խոշոր ուժի մը, եւ հետեւաբար՝ հարկադրուած էր ընդհանուր նահանջ մը ընել ամբողջ ճակատի վրայ: Չ.

Այս դէպքերը կը պատահէին 1915 յուլիս 20-23-ին, ու կը ստիպէին Վասպուրականի եւ Բուլանուխ-Մալազկերտի ողջ հայութիւնը, առաջին անգամն ըլլալով, թողնել իրենց հայրենի օճախը եւ մեկնիլ դէպի Կովկաս:

Անմիջական հարուածը ուղղուած էր Մալազկերտին եւ Կորին, ուր նահանջը հարկադրանքի մը տակ տեղի կ'ունենար: Սակայն ընդհանուր նահանջի լուրը կը շարունակէր կամաւորական բանակը, որ այնքան հերոսութիւններու գնով յառաջացած էր մինչեւ Նէմրուտ եւ իրեն դէմ թշնամի մը չէր տեսներ: Աւելի քան ցնցուած էր Վանի հայկական իշխանութիւնը, որ ծանր երկնտրանքի մը առջեւ կը գտնուէր. կամ մնալ Վանի մէջ, ու կամաւորական ուժերով պաշարուիլ, կամ հրաժարուիլ հայկական իշխանութենէ, դառնալ գաղթականական բազմութիւն մը եւ դիմել դէպի Իգատրի եւ Էջմիածնի փոշոտ ճանապարհները: Այդ ժամանակուայ ղեկավարները չկրցան եւ չէին ալ կրնար չափել դէպքերու ծանրութիւնը: Անպատրաստ գտնուեցան սեփական ուժերով, ժամանակ մը պահպանելու Վանի գլխաւոր դիրքերը: Ու նախընտրեցին զանդուածային գաղթը, ժողովրդի Ֆիզիքական գոյութիւնը փրկելու մտահոգութեամբ:

Մեր վառ աւերը մշուշի մէջ կը թաղուէր: Խոշոր փլուզում մը տեղի կ'ունենար, ու մեզ մեր նորակառոյց կեդրոններէն ցրիւ կուտար...

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ


10) Բասէնի մէջ գործողներս բոլոր աշխատանքները յանձնեցինք մեր յաջորդներուն եւ Յունիսի սկզբին Ռոստոմի հետ, Իգատրիէն մեկնեցանք Վան: Հագիւ տաս օր մնացինք ազատուած ու ոգեւորուած Վանի երիտասարդութեան հետ, երբ Հ.Յ.Դաշնակցութեան Հայաստանի Բիւրոյի (որու գլխաւոր անդամներն էին Ռոստոմ եւ Արամ Վանի մէջ) որոշումով, Բասէնի մէջ գործող չինգ ընկերներս մեկնեցանք Մալազկերտ:

11) Ամենէն հաւանականութեամբ թրքական յարձակողական բանակի թիւը 30,000-ի կը հասնէր: 70,000-ը մեծ չափազանցութիւն մըն էր: Այդ թիւերը կրնան ստուգուիլ միայն թրքական զինուորական պատմութեան էջերէն, ինչ որ մեզի կը պակսի: Տ. Դեւոյեանի ընթացքը շատ մեծ դժգոհութիւն յարոյց անոր դէմ: Տարօնի գործիչները կուսակցական դատ բացին եւ 1919-ին Երեւանի մէջ գումարուած Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհ. Ժողովը այդ խնդիրը քննեց եւ յանձնեց կուսակցական դատական ատեանին. սակայն դէպքերու բերումով այդ դատական գործը կիսատ մնաց:



ՆՒՄՍԱՒՈՐԻՉ

ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ



Բ. ՏԱՐԻ ԹԻ 5
ԱՊՐԻԼ
 April | Avril
 Year 2 | Année 2
 No. 5 - 2018

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

ՄԱՀՈՒԱՆ ԽՈՐՏԱԿՈՒՄԸ

ԴԱՍԵՐ՝ ՃՇՄԱՐԻՏ ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ԲԱԲԳԵՆ ԱՐԹԵՊԻՍԿՈՊՈՍ Առաջնորդ՝ Գանատայի Հայոց Թեմի

Դարձեալ հրեշտակներու ուրախ աւետիսին ենք ունկնդիր, մարդոց եւ աշխարհին համար հնչեցուած յաղթանակող մեծագոյն աւետիսին, այս անգամ լոյս գերեզմանէն հնչող, ՅԱՐԵԱՒ ԱՍՏՈՒԱԾ, մարգարեական կանխասացութեամբ՝ «Մահը կլանուեցաւ, յաղթանակը շահուեցաւ» (Ես. 25.8): Այո, մահը նուաճուեցաւ կեանքով, եւ ահա Յարութեան աւետիսն է, որ կը հնչէ ամէնուրեք:


Ի՛նչ հրաշք՝ Մեղքի ու մահուան թագաւորութեան անկումը: Մարմնացեալ հօգոր Աստուած խորտակեց դժոխքի դռները, արձակեց մահուան կապանքներով գերեզմարուածները:

Ի՛նչ հրաշք. Տէրը մահուամբ մահուան յաղթեց, և մարդուն կեանք շնորհուեցաւ առաւել կեանք: Մահուան անիմաց երկիւղին դիմաց կանգնած մարդուն համար, Տէրը կեանք պարգեւելու առաքելութիւն դարձուց իր երկրաւոր կեանքը, հոչակելով. «Ես եկայ որպէսզի կեանք ունենան, եւ լեցուն կեանք ունենան» (Յհ 10.10):

Այո, մահուան նուաճումով աստուածապարգեւ կեանքն էր, որ յաղթականօրէն վերադարձաւ աշխարհ: Թափուր գերեզմանէն տէրունական ձայնն է, որ կը հնչէ դարձեալ. «Ես եմ Յարութիւնը եւ Կեանքը» (Յհ 11.25):

Թող Յարութեան տօնը վերանորոգէ մեր հաւատքը, նոր ու անմահական կեանք պարգեւէ բոլորիս:

Թող Յարուցեալ Փրկիչը ամրացնէ մեր ժողովուրդի միասնականութիւնը, հօգորացնէ մեր հայրենիքը, զայն դնելով խաղաղ ու բարգաւաճ կեանքի ճանապարհներուն վրայ:



Փա՛ որ հրաշափառ յարութեանդ, Տէր: Քրիստոս Յարեաւ ի մեռելոց. Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Աստուծոյ բոլոր հրամանները մեր հանգստութեան համար են. Ան երբ երանի կու տայ աղքատներուն, հեգերուն եւ սգաւորներուն, ռդորմածներուն եւ ուրիշներուն, այս բոլորէն Ինքը ոչի՛ նչ կ'օգտուի, այլ անոնցով մեզ կը զարդարէ: Երբ կ'ըսէ «Անօթեցայ», Ան տուածիդ կարօտ չէ, Ինքը կրնայ աղքատները կերակրել, սակայն այդ խօսքով քո՛ւ բարիքդ կը ցանկայ: Ինչպէս որ արեւը պէտք չունի մեր միջոցով տեսնուելու. նոյնիսկ էթէ մէկը իրեն չնայի, միշտ իր պայծառութեամբ կը ճայ, այլ մե՛նք ենք, որ կը շահինք իր ներկայութեամբ, այս իրականութիւնը որքա՛ն աւելի կը պատշաճի Աստուծոյ:

Մի՛ ըսեր, թէ՛ չեմ կրնար ինծի նախատողները սիրել, այլ ըսէ՛, թէ՛ չեմ կրնար ատել, որովհետեւ այս վերջին խօսքը Քրիստոսի աշակերտին յատուկ է, մինչ առաջինը սատանայի աշակերտին:

Երբ բարիքներով շրջապատուած ես եւ գոհութիւն կը յայտնես, ըրածդ մեծ բան չէ, որովհետեւ պատճառը պատիւն է. բայց երբ վիշտի մէջ գոհութիւն կը յայտնես, անիկա գովելի կը դառնայ եւ ինքնին մեծ նշանակութիւն կ'ունենայ բազմաթիւ առաքինութիւններով զարդարուած. նախ՝ զԱստուած կ'ուրախացնես, երկրորդ՝ սատանան կ'ամչցնես եւ երրորդ՝ վիշտերդ այլեւ չես զգար:

Բարսեղ Մաշկետրոցի

ՃԻՇՏԸ ԳԻՏԱՍԱՔ



Զատկուան յատուկ՝ ժողովրդական ընդհանրացած սովորութիւն է հաւկիթներ գոյնզգոյն ներկելն ու հաւթախաղ կազմակերպելը:

Ընդհանրապէս աշխարհի բոլոր կրօններուն մէջ հաւկիթը կարեւոր նշանակութիւն կը ներկայացնէ. նոյնիսկ հին հռոմէացիներն ու յոյները ձու կը նուիրէին իրենց չաստուածներուն:

Կարդանք միջնադարու աստուածաբան՝ Գրիգոր Տաթեւացիին հետեւեալ բացատրութիւնն ու մեկնաբանութիւնը կարմիր ներկուած հաւկիթի մասին. «Զատկին հաւկիթ կը ներկենք... Միա՛ յն Զատկին հաւկիթ կը ներկենք, որովհետեւ հաւկիթը օրհնակն է ամբողջ աշխարհին, եւ ինչպէս իմաստունները կ'ըսեն, դուրսի կեղեւը կը նմանի երկնքին, մաշկով տոպրակը՝ օդին, սպիտակ բաժինը՝ ջուրին, դեղինն ալ, այսինքն՝ մէջը, երկիրն է: Իսկ կարմիր ներկը կը նշանակէ, թէ ամբողջ աշխարհը փրկուեցաւ Քրիստոսի արեամբ: Իսկ մենք հաւկիթը մեր ձեռքերուն մէջ առնելով կը հոչակենք մեր փրկութիւնը: Այդ է պատճառը, որ մեր պահքը սկսելու եւ աւարտելու համար նախ, հաւկիթ կ'ուտենք եւ յետոյ ուրիշ կերակուրներ»:

Ուրե՛ս հաւկիթը կեանքի՛ եւ յարութեան խորհրդանիշն է, իսկ կարմիր գոյնը Յիսուսի արիւնը, որ թափուեցաւ մարդոց փրկութեան համար:

ՀՈԳԵՒՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ



«Կայէ՛ն, ո՛ր է քու եղբայրդ Աբելը» (Ծն 4.8):



ՔՐԻՍՏՈՆԵՍԿԱՆ

Աստուածաշունչին մեջ յիշատակուած շատ պատուհներ կան, որոնցմէ իւրաքանչիւրը իրեն յատուկ այժմեական, հոգեւոր եւ բարոյական պատգամ մը կը փոխանցէ, դաս մը կը սորվեցնէ մեզի:

Սուրբգրային պատուհներու գլուխ-գործոցներէն մէկը, երկու եղբայրներու՝ Կայէնի եւ Աբելի պատմութիւնն է. երկու եղբայրներ, որոնք Աստուծոյ բարիքները կը վայելէին: Աբելը Աստուծոյ աչքին աւելի հաճելի թուեցաւ, իր մատուցած նուէրներուն համար. իսկ Կայէն, նախանձէն բորբոքած, քարի մը հարուածով վերջ տուաւ իր եղբոր կեանքին:

Սակայն Աստուծային ձայնը ամպրոպագոռ ուժով, պոռթկացող շեշտով գոչեց. «Կայէ՛ն, ո՛ր է քու եղբայրդ Աբելը»:

Կայէնի եւ Աբելի պատմութիւնը պատկերն է մերօրեայ հասարակական կեանքին: Այսօր ալ ամէն տեղ, ազանութեան, փառքի եւ մանաւանդ նախանձի գրգիռներէն մղուած, եղբայրասպան կոռիւներ ու պատերազմներ կը ծագին ու կը մղուին, պայքարի անուան տակ:

Ինչպէս որ անհատ մարդը կ'ուզէ ինքզինք պարտադրել ուրիշին, նոյնիսկ անոր գոյութեան վերջ տալու միտումով, այնպէս ալ ազգեր ազգերու կը տիրեն, զանոնք բնաջնջելու միտումով:

Լինել-չլինելու գոյապայքարին գոհերէն մէկն ալ հայ ազգը դարձաւ, թուրք ազգին եսակեղրոնութեան, միայն եսին կառչած ըլլալուն, եւ եսասիրութեան քանդիչ հոգեբանութեան պատճառով, աշխարհաքաղաքական կայէնեան փառասիրութենէն, շահամոլութենէն ու նախանձի մոլուցքներէն մղուած:

Սակայն ո՛վ հրաշք, ապրիլը իր 24-ով չկրցաւ յագուրդ տալ թուրքին եղբայրասպան ու արինարբու ախորժակին, այլ հակառակը, ազգի նահատակներու արեան ձայնը, ապրող ազգի պահանջատէր ձայնով կը բողոքէ... Իսկ Աստուծային արդարութեան յաւերժաձայնն առայսօր կը գոչէ. «Ի՛նչ ըրիր, քու եղբորդ արեան ձայնը գետնէն ինծի կը բողոքէ: Դուն անիծեալ ես երկրէն, որ իր բերանը բացաւ եղբորդ արիւնը քու ձեռքդ ընդունելու» (Ծն 4.10-11):

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Վարդան Վրդ. Թաշճեան



ՆԿԿԵՍՈՒԹԻՒՆ

Շարունակուած նախորդ թիւէն



«Արդարեւ, թէպէտ բոլոր մարդիկ մեղանչեցին եւ Աստուծոյ փառքէն զրկուած կը մնան, սակայն Աստուած զանոնք կ'արդարացնէ իր ձրիօրէն պարգեւած շնորհքովը, Քրիստոս Յիսուսի փրկագործութեան միջոցաւ»:(Հո 3.23)

Մարդու հոգեկան վճռակամութիւնը կը սկսի մեղքի գիտակցութեամբ: Նայինք ի՛նչ ըսել է «Աստուծոյ փառքէն զրկուած մնալ»:

Եթէ Ողիմպիականի «Բարձր ոստում»ի 100 մեթրի չափանիշ մը դրուէր, ոչ ոք պիտի կրնար զանիկա գործադրել: Աշխարհի ախոյեանը կրնար մօտենալ այդ չափանիշին, սակայն «պակաս» պիտի գտնուէր, որովհետեւ սահմանուածը անհասանելի չափանիշ մըն է:

Մարդ արարածին համար ալ նոյնն է: Սուրբ Աստուծոյ դրած կատարեալ չափանիշը անհասանելի է: Ոմանք կրնան աւելի մօտենալ այս չափանիշին, քան ուրիշները, բայց ամէնքն ալ «Աստուծոյ փառքէն զրկուած պիտի մնան»:

Ուստի, կեանքի մեջ յաջողելու միակ կերպը մեղք գիտակցելով, խոստովանիլն է զայն, զոջումով ապաշխարելը, հաւատքով ընդունիլը Աստուծոյ փրկութեան ձրի պարգեւը, եւ ինքզինքդ կամովին Յիսուսին յանձնելը: Անգամ մը որ արձանագրուեցար կեանքի մեծագոյն մրցաշարքին, «Այնպէս վազեցէք որ մրցանակին հասնիք...», պիտի ըսէր Պօղոս Առաքեալ (Ա. Կր 9.24), «Նպատակը զիտելով Քրիստոս Յիսուսի եղած Աստուծոյ վերին կոչումին մրցանակին կը վազեն»։ «Եւ ուշադիր կերպով կը վազեն դէպի նպատակակետը, իբրեւ մրցանակ ստանալու համար յաւիտենական կեանքը, որուն կը հրաւիրէ մեզ Աստուած, Քրիստոս Յիսուսով»։ Կը գրէ նոյնիսկ Պօղոս Առաքեալ Նոր Կտակարանի ախոյեանը, Փիլիպպեցիներուն ուղղուած իր նամակին մեջ (3.14):

Հիւսիսային Քորեայի մեջ տեղի ունեցան Ողիմպիական խաղերը, եւ գիտենք, որ շատ մարզիկներ յուսախար վերադարձան: Ոմանք ցաւ ապրեցան, որ իրենց լաւագոյնը չկրցան դրսևորել. սակայն ասիկա պատճառ պիտի ըլլար որ շարունակէն մարզուիլ, յաջորդի աւելի լաւին հասնելու: Նոյնիսկ մրցանակներ ստացող մարզիկներ պիտի ուզեն նորանոր մրցանիշներ սահմանել: Մէկ բան պարզ է. յարատեւութիւնը անբերաժեշտ է: Այսպէս ալ Աստուծոյ յանձնուելով քալելը, յարատեւութիւն կը պահանջէ: Աճիլ եւ մեծնալը շատ կենսական է նաեւ հոգեւոր կեանքին մեջ:

Մարզիկի մը պարգեւատրումը ժամանակաւոր է. այդ իսկ պատճառով, ան աւելի մեծ իրագործումներու կը ձգտի: Նոյնպէս, հաւատացեալին կեանքը կը սկսի Քրիստոսը ընդունելով, բայց վերջնական մրցանակին չենք տիրանար մինչեւ երկինք հասնինք:

Ողիմպիական խաղերը կու գան ու կ'երթան, մարզիկներ կը շահին ու կը պարտուին: Ոսկի, արծաթ եւ պղինձ մետալներ կը տրուին. սակայն, «Ի՛նչ օգուտ, եթէ մարդ ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ» (Մտ 16.26):

Այո, ոսկիէն աւելի ցանկալի է Տիրոջ բերած փրկութեան ձրի պարգեւը: Անոր կառչինք եւ Իրմով յաղթական մրցողներ ըլլանք, ու Մաղմուսեգոյին պէս ըսենք. «Ինծի հազարաւոր ոսկիէ ու արծաթէ աւելի լաւ է Քու բերնիդ օրէնքը: Անոր համար Քու պատուիրաններդ ոսկիէն ու ազնիւ ոսկիէն աւելի սիրեցի» (Մղ ??????):

Հրահաս

ՍՈՒՐԲԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ Քառասուն Սուրբ Մանուկները

Շատերուն ծանօթ է այս վերնագիրը: Սակայն, այն, ինչ կրնայ ծանօթ չըլլալ շատերու, հետևեալն է. այս քառասուն հոգին մանուկներ չէին, այլ ընդհակառակը՝ տարիքով հասուն զինուորներ: Իրենց տրուած «մանուկ» մակդիրը կը մատնանշէ անոնց հոգիի մանկութիւնը՝ անմեղութիւնն ու պարզութիւնը: Աւետարանին մեջ ալ կը կարդանք Քրիստոսի խօսքը որ կ'ըսէ. «Եթէ չփոխուիք եւ մանուկներու պէս չըլլաք, երկինքի արքայութիւնը պիտի չմտնէք» (Մտ 18.2). ինչպէս նաեւ, «Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է երկինքի արքայութիւնը» (Մտ 19.14): Այս քառասուն անձերը «մանուկ» անունով պսակուեցան, որովհետեւ մանուկի անկասկած հաւատքով վստահեցան Քրիստոսին, եւ նահատակութիւն յանձն առին: Ահաւասիկ անոնց նահատակութեան համառօտ պատմութիւնը:

Դ. դարուն սկիզբը, շատերու հետ Սեբաստիոյ կայսերական գունդին մեջ ծառայող զինուորականներ էին անոնք: Երբ կայսրը հաւատաքնութեան կ'ենթարկէ իր զինաձառայողները, այս երիտասարդները անվախօրէն կը յայտնեն իրենց քրիստոնէայ ըլլալը: Հեթանոսութեան վերակոչելու զանազան ձախող փորձերէ ու միջոցներէ ետք, ձմրան սառնամանիք գիշեր մը, կայսրը զանոնք նետել կու տայ լիճին մեջ, որպէսզի ուրանան իրենց հաւատքը: Անոնք, այս քաջերը իրենց հաւատքին մեջ հաստատ, ցրտահար կը նահատակուին:

Համաձայն պատմութեան, անոնց նշխարները կ'ամփոփուին Սեբաստիա քաղաքին մեջ, եւ յետագային այնտեղ կը կառուցուի քառասուն գմբէթով Քառասուն Մանուկ Տաճարը: Տաճարը կանգուն կը մնայ մինչեւ Լէնկոթիմուրի արշաւանքը:

Գարեգին Վրդ. Շիրումեան

ՈՒՍԱՆՈՐԿ ԱՐՕԹՔ

ԺԵՅՈՒՂ

Արարիչ անձանցի եւ աղբիւր լոյսի ու իմաստութեան, լուսատու միտքս պայծառութեան նշոյլով եւ մաքրէ մէջէս անգիտութեան խաւարը: Դուն, որ մանուկ երեխաներու լեզուներուն մեջ պարզախօսութիւն կը դնես, վարժեցո՛ւր լեզուս, եւ Քու շնորհներդ օրհնութեամբ լեցուր շրթունքներս:

Տուր գորութիւն ձանչնալու, ընդունակութիւն՝ պահելու, կորովամտութիւն մեկնաբանելու, դիւրրեկալութիւն ուսանելու, ինչպէս նաեւ առատօրէն շնորհախօսելու: Ուստիստե՛ ու յարգարէ՛ իմ այս կեանքս, ուղղէ՛ ընթացքս եւ աւարտին հասցուր կեանքս դէպի Յիսուս Քրիստոս Տէրը: Ամէն:



MESSAGE DU PRÉLAT

La destruction de la mort

Les anges se réjouissent encore pour les hommes et proclament la glorieuse nouvelle au monde, celle de la RÉSURRECTION. « Il détruit la mort par sa victoire. » (Ésaïe 25:8) La mort a donc été vaincue par la vie; voici l'évangile qui retentit partout. Quel miracle! On annonçait ainsi la chute du péché et de la mort. Dieu tout-puissant a anéanti les portes de l'enfer, libéré les prisonniers des chaînes de la mort. Quel miracle! La mort a été vaincue par la mort et a donné la vie à l'homme, une plus grande vie. Face à la mort, l'homme a reçu comme mission de redonner vie à sa vie terrestre : « Moi, je suis venu afin que les hommes aient la vie, une vie abondante. » (Jean 10:10) Avec la conquête de la mort, ce fut la vie pieuse qui revint, victorieuse, sur terre. Le Christ s'est levé dans sa tombe dans une lumière effrayante, cassant les pierres et faisant trembler la terre... Ce fut la même voix qu'on entendit dans le cimetière : « Je suis la résurrection et la vie. »

Que la fête de cette résurrection renouvelle notre foi, et qu'elle octroie une vie nouvelle, animée et sans limites à nous tous.

Que notre Sauveur, revenu à la vie, donne de la force à l'unité de notre peuple, qu'il fortifie notre patrie en la guidant vers la paix et la prospérité.

Gloire à ta glorieuse résurrection, Seigneur!

Le Christ est revenu d'entre les morts.

Béni soit la résurrection du Christ.



However, there will be times where we will fail to do all that because we're imperfect. We won't love as we ought, we won't serve, we will disappoint, we will have arguments and outbursts and even doubts. But does that mean we're no longer married? No. We've made an oath. We're still married; we're bound for life, no matter what happens during the relationship (by stating "no matter what" I don't mean any serious abuse or violence, which would be unacceptable).

I use the analogy of marriage to relate it to following Christ in faith, based on the biblical concept of Christ as the Groom and the Church as the Bride (Ephesians 5:32). Baptism is our "marriage" with Christ; it's how we become in union/one with Him (Galatians 3:27). And, as in any relationship, communion is essential. We maintain our union with Christ and grow in our relationship with him through listening (reading of His Word), through speaking honestly and lovingly (prayer), getting together over meals (receiving Communion from the Holy Altar), and discussing things that matter to us (Bible study) I prefer a brief explanation, rather than the brackets. We do all these things out of our love for Him and not as an obligation.

But at the same time, there will be days where we will grow distant, we will fall short of loving Him, we will argue with Him and experience unbelief - all because we're still of the flesh; we're imperfect as we have yet to renew our minds (Romans 12:2) in order to match our divine nature (2 Peter 1:4). But He is perfect and He loves us. He loved us while we were still sinners (Romans 5:8), back when we hadn't even acknowledged/accepted him or chosen him as our "spouse". He's a man of His promise (Numbers 23:19; Romans 4:21; Hebrews 6:13). He promised that the day we made the decision to "marry" Him, He would clothe us with His righteousness (2 Corinthians 5:21), cleanse all our sins, and not remember them (Isaiah 43:25). None of them! For love does not keep a record of wrongs (1 Corinthians 13:5). We are bound by marriage and He is against divorce. He will never leave us because of the person He is. What a perfect "spouse" He is! We will fail over and over again, yet He won't and He will never hold that against us, because we are in love, in God Himself, for God is love (1 John 4:8) and we are forever married.

Mariam Arakelian

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ

Ազնուութիւնը կը յաղթէ

Կարօն եւ Պատրիկը իրենց լաւագոյնը ըրին, որպէսզի համոզեն, որ Հրակ Կիրակնօրեայ Դպրոց գալ: Ձինք հրաւիրեցին եւ հաճելի պատմութիւններուն եւ երգերուն մասին խօսեցան: Մակայն զովացուցիչի գաղափարն իսկ օգուտ չըրաւ: Հրակ չհետաքրքրուեցաւ:

Երեւակայեցէք Կարոյին եւ Պատրիկին զարմանքը, երբ Կիրակի մը, Հրակ Կիրակնօրեայ Դպրոց եկաւ:

- Ո՛վ պատճառ եղաւ, որ զաս, Հրակ, հարցուցին:
- Ա՛ն, ըսաւ մատնացոյց ընելով աղջիկ մը:
- Ըսել կ'ուզես, Ռաքէ լը, հարցուց Կարօ, անիկա այնքան ամչկոտ է, որ ուրիշ պատիկներու հետ չի խաղար իսկ:

Երբոր գրքերս գետին ինկան, ինք օգնեց ինծի, հաւաքելու զանոնք: Ուրիշ անգամ մը, իր ճաշէն ինծի ալ տուաւ:


Կարօն եւ Պատրիկը իրարու նայեցան, մինչ Հրակ հեռացաւ:

- Կարծեմ մենք երբեք չխորհեցանք Հրակին հետ ընկեր ըլլալ, ըսաւ Պատրիկ:

Ազնուութիւնը լաւագոյն նուէրն է, որ մէկը կու տայ ուրիշին: Յիսուս իբրեւ Աստուած, մարդացաւ, ծնաւ մտուրի մը մէջ, սորվեցաւ, խոնարհ եւ ազնիւ ապրեցաւ:

You must travel right through each event in Jesus' life in the right order!

CAN YOU FIND YOUR WAY?



- 1- Jesus Born in Bethlehem
- 2- Joseph teaches Jesus to work as a carpenter.
- 3- Jesus heals a little girl.
- 4- Jesus is crucified.
- 5- Jesus is alive again.
- 6- Jesus ascends to heaven.

Գանատայի Հայոց Թեմի Կիրակնօրեայ Դպրոցներու նպատակն է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու դաստիարակութեան եւ ասանդութեան համաձայն՝ մեր մանուկներուն եւ պատանիներուն ջամբել կրօնական դաստիարակութիւն եւ եկեղեցու վերաբերեալ գիտելիքներ եւ ծանօթութիւններ:

Ձեր զաւակները Կիրակնօրեայ Դպրոց արձանագրելու համար, կրնաք հեռաձայնել ձեր շրջանի եկեղեցիներու գրասենեակները:

Կիրակնօրեայ Դպրոցի ժամերն են՝ Կիրակի առաւօտները ժամը 10:30-1:00:



ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Զատիկ բառը

Զատիկ բառը ի յայտ եկած է Ոսկեդարուն, երբ մեր թարգմանիչ վարդապետները Աստուածաշունչը կը թարգմանէին: Հին Կտակարանին մէջ նշուող «Պասէք»-ի տօնը, որ հրեաներու ամենամեծ եւ յարգուած տօնն էր, կը յիշեցնէր հրեաներուն Եգիպտոսէն ելքը դէպի խոստացուած երկիր: Մեր վարդապետները այս բառը թարգմանած են «զատիկ», որ, իբրև բառ, կը նշանակէ անցնիլ, զատուիլ կամ բաժնուիլ:

Քրիստոնէաներուս համար, ան կը խորհրդանշէ ազատութիւն, Քրիստոսի միջոցով ազատագրուիլ մեղքի չարչարանքներէն: Ներկայիս, Հայ Եկեղեցին Զատիկը կը նշէ զարնան գիշերահաւասարին յաջորդող լուսնի լրման առաջին Կիրակի օրը (Այս Տաղաւար Տօնը 35 օրուայ շարժականութիւն ունի, Մարտ 21-էն յետոյ մինչեւ Ապրիլ 26):

ԼՈՒՐԻՆ ԱՄԱՆՈՒՂԱՆԵՆ



- Հինգշաբթի, 9 Մարտ 2018-ին,
- Շաբաթ, 10 Մարտ 2018-ին,
- Երեքշաբթի, 13 Մարտ 2018-ին,

Գերաշնորհ Ս. Բաբգէն Արք. Զարեան, ընկերակցութեամբ Կրօնական Ժողովի ատենապետ Հոգեշնորհ Ս. Վարդան Վրդ. Թաշճեանի, Ազգային Վարչութեան ատենապետ Տիկին Ծովիկ Թերզեանի եւ Դիւանապետին, այցելեց Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատուն:

Մոնթրէալի մէջ տեղի ունեցաւ Աստուածաշունչի առաջին տպագրութեան 350-ամեակին նուիրուած գիտաժողովը եւ Ոսկան Երեւանցիի ֆիլմի ներկայացումը:

Բաբգէն Արքեպիսկոպոս ներկայ գտնուեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան նուիրուած խորհրդաժողովի մը McGill Համալսարանէն ներս: Խորհրդաժողովը կազմակերպուած էր Հ.Յ.Դ. Արմէն Գարօ Ուսանողական Միութեան կողմէ, համագործակցութեամբ Գանատայի զանազան հայ ուսանողական միութիւններուն:

ԱՊՐԻԼ 2018						
Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ	Կիրակի
						1
2	3	4	5	6	7	8
16	17	18	19	20	21	22
23	24	25	26	27	28	29
30						

- Ապրիլ 1
Ս. Զատիկ
- Ապրիլ 7
Աւետուճաւ Ս. Աստուածածնի
- Ապրիլ 8
Կրկնազատիկ՝ Նոր Կիրակի
- Ապրիլ 15
Կանաչ Կիրակի՝ Աշխարհամատրան Կիրակի
- Ապրիլ 22
Կարմիր Կիրակի
- Ապրիլ 24
Յիշատակի օր Ապրիլեան Նահատակներու (103-ամեակ)
- Ապրիլ 29
Տօն Երեւման Ս. Խաչի

ՀՈԳԵԻՈՐ ԽՕՍՔ



«Մարմնականը խորհիլը մահ կը պատճառէ, մինչ հոգեկանը խորհիլը՝ կեանք եւ խաղաղութիւն»:
(Հռ. 8:6)

CASSANDRA HEALTH CENTRE

I.D.A. PHARMACY

CASSANDRA CLINIC WALK-IN & FAMILY PRACTICE
416.331.9111

Dr. Marinosyan accepting new patients (416) 331-9111

Dr. Rupert Abdalian
Gastroenterology

Dr. Mari Marinosyan
New Family Doctor

Dr. Omayma Fouda
Family Physician

Dr. H. Kavazanjan
Family Physician

Dr. I. Manhas
Family Physician



CASSANDRA I.D.A. PHARMACY

ARMENIAN MEDICAL CENTRE & PHARMACY

PHARMACISTS
SARKIS BALIAN, BScPhm, RPh
MARAL BALIAN, PharmD, RPh
VARTAN BALIAN, PharmD, RPh

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝
ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝
ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ
ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:

Walk-in Clinic onsite: (416) 331-9111

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)
 Toronto, Ontario M1R 1V2 Tel: (416) 449-2040 Fax: (416) 449-2048






Հ.Մ.Ը.Մ.Ի 100 - ԱՄԵԱԿԻ Ձեռնարկների ՅԱՅՏԱԳԻՐ



Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը այս տարի մեծ շուքով կը նշէ իր հիմնադրութեան 100-ամեակը՝ տարբեր նախաձեռնութիւններով: Առաջին փուլի ձեռնարկները տեղի պիտի ունենան Հայաստանի մէջ՝ 19-29 Յուլիս:



Պանդոկներու դասաւորման համար կապուիլ Անահիտ Գոլանձեանին՝ anniekolandjian@gmail.com,
Whatsapp/Viber - +1-818-915-4866:
100-ամեակի ձեռնարկներուն մասնակցելու համար կապուիլ հետեւեալ անձերուն.
Լիբանան՝ Սիլվա Սաղըրեան +961 3 250 582, Հուրի Շիմշիրեան +961 3 290 965,
Քանաւա եւ Եւրոպա՝ Լիոնի Սարմազեան +1 (519) 241-1477, Անահիտ Գոլանձեան +1 (514) 261-9394,
Արեւմտեան Միացեալ Նահանգներ՝ Սիմա Կարապետեան +1 (818) 426-8373,
Եգիպտոս՝ Սապին Գազանձեան +20 122 236 9007,
Հայաստան՝ Սանան Տէր Պետրոսեան +374 77 605868, Մարիանա Ճուլեան +374 93 778434:

ANI


Ristorante

905.761.6484
1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

LOOKING FOR FULL TIME CHEF TO GRILL

www.aniristorante.ca

Fine Dining
Catering
Party Room
FOR UP TO 15 PEOPLE



ԲԱԲԵԼՈՆ | BABYLON
RESTAURANT



OPENING APRIL 2018
YEREVAN | ARMENIA

91 PAVSTOS BUZAND STREET

TEL: +374 93 588885 | +374 60 488884 | E-MAIL: babylon.armenia@gmail.com



**Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.**
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1



T 450 688-4111
F 450 681-5525
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h
Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկուքի ն մինչև ձեր տունը.
Շաբաթական դեղատուփիկի պատրաստութիւն.
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)
այլ դեղարան. Դեղերու պատուաստում
(vaccination) հիւանդապահի կողմէ.

Բուժական հետեւում՝
արեան բարակութեան (INR), շնչերակային
ճնշման (tension artérielle), արեան շաքարի
(glycémie capillaire), արեան մաղձաճարպի
(cholesterol), եւն.

Manoir Gouin Résidence Certifiée

Résidence pour
aînés autonomes
et semi-autonomes

À partir de **995\$** (prix par nuit)
Tous les repas, collations et supervision
médicale inclus
1½ à 4½

Gicleurs automatiques
dans chaque appartement

Մեկ հոս ուրախ եկ
Պրն. Իրեւան

Պատրաստ ենք 4՝ ընտելաց
մեր ՀԱՆԳԱՏԵԱՆ ՏՈՒՆԵՆ ԱՆՈՒՄ:

Il n'y a pas d'âge pour être heureux!

12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com

ARMENIAN HERITAGE CRUISE®

7 NIGHT WESTERN CARIBBEAN CRUISE! JANUARY 20-27, 2018

AWARD WINNING ADVENTURE

Allure of the Seas®. Not only the most decorated ship in the Royal Caribbean fleet, it's won more awards than any other ship in the world.

Roatan, Honduras
Costa Maya, Mexico

Leaving from Miami

Nassau, Bahamas
Cozumel, Mexico

ALLURE of the SEAS

BEST LARGE CRUISE SHIP
ALLURE OF THE SEAS
2017

BEST FOR ENTERTAINMENT
ALLURE OF THE SEAS
2017

BEST INDIVIDUAL CRUISE SHIP
ALLURE OF THE SEAS
2015

ROYAL CARIBBEAN
CRUISE LINES

BOOK NOW AS PRICES WILL
BE INCREASING MAY 1, 2018!
Rates are per person for double occupancy cabins:

INSIDE CABIN	\$949
CENTRAL PARK VIEW	\$1,049
OCEAN VIEW	\$1,129
CENTRAL PARK BALCONY	\$1,239
BOARDWALK BALCONY	\$1,239
OCEAN VIEW BALCONY	\$1,409
JUNIOR SUITES	\$2,279
GRAND SUITES	\$3,479

TRAVEL GROUP INTERNATIONAL

For Reservations Contact:
Local 561-447-0750 • Toll Free 1-866-447-0750 Ext 108 or 102
125 SE Mower Blvd, Suite 14, Boca Raton, FL 33432 • AHCC@travelgroupintl.com

Call Arp: Bostjjan-Ashkarian (519) 749-2572 • arp@bostgroup.ca

www.armenianheritagecruise.com

ՀՐԱԻԷՐ Ո՞ր ես, քաղա՛ք

Քաղաք, որ պիտի շարունակե՛ս ապրել:
Քաղաք, ուր ապրող հայու՛թիւնդ պիտի շարունա-
կէ դերակատար ըլլալ Ազգի կեանքին մէջ, Հայոց
պատմութեա՛ն մէջ:
Քաղաք, ուր ընդմիշտ մարած պիտի ըլլան հին
կիրքերը, փոխադարձ «ատելութիւնները», նախանձն ու
ստորադասութեան-գերադասութեան բոլոր զգացումնե-
րը, եւ բոլորին ամբողջական ներուժը ի սպաս դրուած
պիտի ըլլայ հայութեան գերագոյն նպատակներուն:
Քաղաք, որ ապահոված պիտի ըլլաս կազմակեր-
պութիւններուդ, միութիւններուդ, հաստատութիւննե-
րուդ եւ գոյատեւման բոլոր կռուաններուդ պահպա-
նումն ու զարգացումը թէ՛ անհրաժեշտ մարդուժով եւ
թէ՛ անհրաժեշտ նւթական խարխախով:
Քաղաք, ուր հայկական վարժարաններդ պիտի
յորդին գաղութի բոլոր հայ մանուկներով ու պատանի-
ներով, որոնց ուսուցիչները պիտի ըլլան լաւագոյններն
ու ամենէն լաւ վարժատրուածները ամբողջ ասպարէզին

մէջ, որոնց գլխաւոր առաքելութիւնը հայեցի դաստիա-
րակութիւնը պիտի ըլլայ:
Քաղաք, ուր հայերէնն ու հայ մշակոյթը ընտա-
նիքներէդ, դպրոցներէդ ու ակումբներէդ ներս թէ՛
դուրս ապրու՛մ պիտի ըլլան, ամենօրեա՛յ ապրում, եւ ոչ
պարզապէս ծանօթութիւն:
Քաղաք, ուր հայ ընտանիքը վերստին պիտի ամ-
րանայ ու հիմքը կազմէ համայնքին, գաղթօճախին,
ազգի՛ն:
Քաղաք, ուր նոր սերունդէն պիտի հասնին ղեկա-
վարներդ, ուր ազգային գործերդ պիտի կառավարուին
ժամանակի ու քաղաքակրթութեան ամենէն յառաջա-
դէմ ըմբռնումներով ու եղանակներով:
Քաղաք, ուր հայ քաղաքացիներուդ ձայնը լսելի
պիտի ըլլայ ու կշիռ ունենայ քաղաքական, տնտեսա-
կան, ընկերային ու մշակութային բոլոր բեմերուն վրայ,
եւ այդ՝ ոչ թէ եւ ոչ միայն հայութեան խնդիրներուն
առնչութեամբ:

Քաղաք, ուր ոչ միայն հայութիւնը, մեծով-
պգտիկով, այլեւ ընդհանուր բնակչութիւնը իրենց
ներգրուած պիտի ունենան Հայ դատի մարզին մէջ,
ապահովելով քու, նահանգիդ եւ երկրիդ իշխանութիւն-
ներու ալ գրական մասնակցութիւնը:
Քաղաք, որ անմիջական, տեւական ու արդիւնա-
ւէտ ներկայութիւնդ պիտի ունենաս հայրենիքի կեան-
քին մէջ, հայրենիք՝ ո՞րուն տարածքները չեն պարփակ-
ուիր Հայաստանի Հանրապետութեան ու Արցախի Հան-
րապետութեան ներկայ սահմաններով:
Քաղաք, որմէ մտաւորական ներուժի լոյսդ պիտի
ճաճանչէ համայն հայութեան ու աշխարհին վրայ:
Ո՞ւր ես, քաղա՛ք, որ այս բոլորը կարենաս ըլլալ
եւ ընել:
Կա՞ս, քաղա՛ք, եւ կա՞ն, պիտի ըլլա՞ն նման քա-
ղաքներ...

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

«ՈՒԽՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ» Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսի Անթիլիաս Փոխադրութիւնը

«ԱՏԱՌՈՑ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ»

1
Սահակ Կաթողիկոսի Երուսաղէմ Սրբոց Յակովբեանց Վանքին մէջ կեցութիւնը երկու ժամանակի բաժնուած է. առաջինը այնտեղ անոր «տարագիր»ի ժամանակն է, երկրորդը՝ Հայոց Կաթողիկոս-Պատրիարքի: «Տարագիր»ի ժամանակը՝ 1915-ի 31 Հոկտեմբեր-1916-ի 19 Օգոստոս⁷⁴⁹: Կաթողիկոս-Պատրիարքի ժամանակը՝ 1916-ի 19 Օգոստոս-1917-ի 19 Նոյեմբեր⁷⁵⁰:
Օրմանեան արքեպիսկոպոս իր յուշերուն մէջ, առաջին ժամանակին վերաբերեալ այս անդրադարձը կատարած է. «Խապայեան Սահակ Կաթողիկոս (...) իւր Աթոռէն տարագրուեցաւ, ստացութիւններէն զրկուեցաւ, գիրերն ու գրութիւններն գրաւուեցան, կալուածներ օտարացան, աստանդական թափառեցաւ եւ մինչեւ իսկ յետնեալ գիւղ մը արքայական զրկուեցաւ: Աքսորավայրը փոխուեցաւ իրաւ, երբ Երուսաղէմի վանքին բնակութիւնը իբր շնորհ պարգեւուեցաւ»⁷⁵¹:
1915-ի Հոկտեմբերին, Կաթողիկոսը անակնկալ հասած էր Երուսաղէմ⁷⁵²: Այն ատեն Օրմանեան արքեպիսկոպոս հոն կը գտնուէր որպէս Պատուիրակ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան⁷⁵³: Նախկին Պատրիարքը 1914-ի Մայիսէն կը բնակէր Կիրակոս Պար. Երուսաղէմացիէ Ցորենաթաղի վրայ շինուած յարկաբաժնին մէջ: Անկիւս «յարմար եւ ազատ յարկաբաժին» մըն էր⁷⁵⁴, ուստի Օրմանեան արքեպիսկոպոս աճապարած էր ելլել հոնկէ, երթալ բնակելու Պատրիարքարանի Ս. Մինաս կոչուած արտաքին թաղին վրայ փութանակի յարմարցուած անկիւնի մը մէջ⁷⁵⁵, ուր պիտի մնար մինչեւ 1916-ի Օգոստոսը, երբ «կազմակերպական փոփոխութիւն»էն հետք, Սահակ Կաթողիկոս Պատրիարքարան պիտի փոխադրուէր, իսկ Օրմանեան արքեպիսկոպոս վերադառնար Ցորենաթաղի յարկաբաժնը, եւ «պաշտօնական ամէն միջամտութենէ եւ մասնակցութենէ» հեռանար⁷⁵⁶: Երկու եկեղեցականներուն փոխյարաբերութիւնը ձգտեալ էր եղած, եւ անոր ուրուականները Երուսաղէմեան այն օրերուն վրայ ալ պիտի յաձէին: Զանոնք յիշելը տխուր է:
Երբ ձէմալ փաշա Երուսաղէմ կ'այցելէր, Սահակ Կաթողիկոս ըստ պատշաճութեան կ'երթար անոր պաշտօնատեղին, որ Համբարձման լերան վրայ գերմանապատկան շէնք մըն էր:
Մայիս 1916: Փաշան Կաթողիկոսը յատուկ տեսութեան մը հրաւիրած էր: Սահակ Կաթողիկոս իր հետ առնելով Եղիշէ եպս. Կարոյեանն ու Գիւտ եպս. Մխիթարեանը գացած էր անոր մօտ: Ձէմալ փաշա Կաթողիկոսին հետ առանձնաբար հանդիպած էր, եւ անոր ըսած՝ թէ Կեդրոնական կառավարութիւնը այլեւս չ'ուզեր, որ «թշնամի»ին, այսինքն՝ Ռուսիոյ հպատակ Կաթողիկոս մը Օսմանեան սահմաններուն մէջ ապրող հայերուն Հոգեւոր Պետը ըլլայ: Ուստի որոշած էր օսմանահպատակ հայերուն կապը իրզել էջմիածնի Գահակային հետ, եւ փոխանակ երկու Պատրիարքութեան (Կ. Պոլիս եւ Երուսաղէմ) եւ երկու Կաթողիկոսութեան (Աղթամար եւ Կիլիկիա)՝ գանոնք միացնել: Անոնց միացման կեդրոն հռչակել Երուսաղէմի Վանքը, եւ միացուած Աթոռներուն Գահակայը կոչել Կաթողիկոս-Պատրիարք Հայոց Թուրքիոյ: Եւ թէ՛ արդէն Կանոնադիրն ալ պատրաստուած է: Ապա Կաթողիկոսին հարցուցած, ըսելով. «Ես իբրեւ բարեկամ, ուզեցի որ այս նոր պաշտօնը Ձեզի յանձնուի, քանի որ արդէն Սիսի Կաթողիկոսն էք ներկայիս: Ի՞նչ կ'ըսէք, կ'ընդունի՞ք»⁷⁵⁷:
Կաթողիկոսը ցնցուած էր եւ ընկճուած: Ի՞նչ պատասխանէր: Այս առնչութեամբ արձանագրուած

խորհրդածութիւնը, որ ապագայ Կաթողիկոս Պետրոս Սարաճեանէ է, կ'ըսէ. «Ձեր կրնար գիտողութիւն ընել, թէ ասիկա Հայ եկեղեցւոյ դարաւոր սովորութեան եւ ընդունուած ու նուիրագործուած կանոնին հակառակ էր, չէր կրնար ըսել, որովհետեւ գիտէր թէ այդ ժամանակամիջոցին մէջ տրամաբանական պատասխան, հին օրէնքի ջատագովութիւն՝ որեւէ օգուտ չունէին, կը հրամայուէր, պէտք էր հնազանդիլ, ուրիշ միջոց չկար: Բայց Սահակ Կաթողիկոս դժկամակ էր, ներկայ կացութիւնը յայտնի էր, ապագան շատ մութ էր, ուստի իր ծերութիւնը պատրուակ ընելով՝ կը խնդրէր որ այդ ծանր լուծը իր տկար ուսերուն վրայ չգրուէր: Սակայն ձէմալ փաշա շուտով տեղի տուող չէր, կը պահանջէր որ Կառավարութեան կարգադրութիւնը ընդունէր»: Ապա փաշան սպառնալիքներով ծածկուած շողորթ լեզու եւ խոստումներ շտապած էր⁷⁵⁸: Կաթողիկոսը հասկցած էր ամէն ինչ: Սակայն ժամանակ չահելու համար՝ ըսուածներուն վրայ խորհիլ եւ ապա պատասխանել խնդրած: Փաշան օր մը տուած էր, եւ թելադրած «պետական գաղտնիք»ը ոչ ոքի ըսել, մինչեւ Կեդրոնական Կառավարութեան վերջնական որոշումին փոխանցումը եւ յայտարարումը: Ու աւելցուցած. «Ուրիշ բան մըն ալ պիտի ըսէի: Նախարարաց Խորհուրդը որոշեց, որ Սիսի Վանքին կալուածները Ձեզի պիտի դարձուին, գանոնք կառավարելու համար փոխանորդ մը ն,անակեցէք, որ զրկեմ Սիս»⁷⁵⁹:
Կաթողիկոսը Վանք վերադառնալով, Եղիշէ եւ Գիւտ եպիսկոպոսներուն իր անտանելի տագնապը պարզելով, ըսած էր. «Շահաբաս այս տեսակ ճիւղային եղանակներ, սոսկալի բան...Թուրքը այսքան դարերէ ի վեր տակաւին չէ կրցած հասկնալ հայ ժողովուրդի մտայնութիւնը, հայ ժողովուրդին հանդէպ էջմիածնի ունեցած պաշտումը»⁷⁶⁰: Ետք գանոնք խորհրդակցութեան կանչած էր: Խորհրդակցութիւնը յանգած էր որոշման՝ ընդունիլ առաջարկուած պաշտօնը՝ ի սէր ժողովուրդին, խորհելով որ «թերեւ կարելի է ժողովուրդը եղած տեղերնին հանգիստ պահել», յուսալով որ երբ պատերազմը վերջանայ այս կամայական եւ «արտառոց կարգադրութիւն»ը չեղեալ պիտի նկատուի: Իսկ կալուածներու մատակարարութեան գործին առնչաբար՝ Եղիշէ եպս. Կարոյեանը զրկել Սիս⁷⁶¹:
Յաջորդ օր Կաթողիկոսը փաշային ներկայանալով հաղորդած էր որոշումը, եւ միաժամանակ խնդրած տարագիր ժողովուրդի վիճակին բարւոքումը: Փաշան դարձեալ կրկնած էր խոստումները եւ հարցուցած, թէ արդեօք Կաթողիկոսը Սիսի կալուածներուն համար իրեն փոխանորդ մը նշանակած էր: Կաթողիկոսը «այո» պատասխանած էր եւ ներկայացուցած Եղիշէ եպիսկոպոսը, որ 15 օրեր պիտի սպասէր՝ մինչեւ որ ճամբորդութեան արտօնագիրը հասնէր եւ փաշային «վեսիգայ» ու Ատանայի Կուսակալին ուղղուած յանձնարարական մը առնելով՝ ճամբայ ելլէր 15 Յունիսին⁷⁶²: Ատանա հասնելով՝ այնտեղ պիտի մնար ութ օրեր, ապա Սիս երթար: Իրեն ոչ կալուած պիտի յանձնուէր եւ ոչ ալ եկեղեցի տրամադրուէր, բայց թոյլ տրուէր քաղաքը տան մը մէջ բնակիլ մինչեւ 1918-ի Հոկտեմբերի վերջերը: Պատերազմին դադրելէն յետոյ՝ 11 Նոյեմբերին պաշտօնական զինադադարի կնքումէն հետք է միայն, որ անոր պիտի յանձնուէին Մայրավանքը եւ կալուածները⁷⁶³:
Կաթողիկոսը Արդարութեան Գործոց Նախարարութեանէն իր «նոր պաշտօն»ը հաստատող հեռագիր պիտի ստանար 29 Յուլիս 1916-ին, որ ներկայ թուական

նագրումով՝ 11 Օգոստոս 1916-ն է⁷⁶⁴:
Այս առնչութեամբ՝ Օրմանեան արքեպիսկոպոսէ անդրադարձ մը. «Հայութեան դէմ հալածանք բացողը բաւական չսեպեց հայ անհատներու կեանքին ու ինչքերուն, Հայ եկեղեցւոյ պաշտամանց ու հաստատութեանց, հայ կրօնքին ինքնութեան ու պահանջին դէմ ուղղել իւր փքինները, եւ նոյնիսկ պետական սկզբունքով, նախնական աւանդութեամբ եւ կայսերական հրովարտակով ճանչցուած ու հաստատուած հայութիւնը ուզեց իւր կազմէն զրկել, եւ անոր նոր կազմակերպութիւն մը տալ, որով իւր կարեւորութիւնը կորսնցնէ, եւ կ'իթէ հնար ըլլար՝ գոյութիւնն իսկ վտանգէ»⁷⁶⁵:

ԳԱՌՆԻԿ Ա. Բ. Գ.

ԱՂԲԻՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 749.- ԿՊԿ, ս 925: ԿՊԿ-ի այս նշումով տրուածը վրէպ մըն է, որ սրբագրելի է յետագայ սխալակներու ընթերցումով: Նաեւ Օրմանեան արքեպիսկոպոսի «Խոհք եւ Խօսք»ին:
- 750.- ԿՊԿ, ս 954:
- 751.- ՕԽԽ, է 338:
- 752.- Ն, է 334:
- 753.- Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռէն Օրմանեան արքեպիսկոպոս հարկադրաբար հրաժարած էր 16 Յուլիս 1908-ին: Եւ «(այն) օրէն ամբողջ չորսուկէս տարի անցնալին ներքեւ մնալ, կախակայեալ կացութիւն մը վարել, ամբաստանուիլ, հարցաքննուիլ եւ դատուիլ» էր պահուած իրեն համար, ՕԽԽ, է 282: «Անպարտութեան վնասով կապանքներէ» արձակուելէ յետոյ, «պաշտօնական շրջանակ» պիտի վերադառնար: 21 Ապրիլ 1914-ին, Պատրիարքութեան Խառն ժողովը զինք Պատուիրակ ընտրած էր եւ Երուսաղէմ առաքած: Ասոր հիմնական պատճառը՝ Վանքի ելեւմտական ին խնդիրն էր: Պատուիրակութեան մաս կազմած էին Իրաւաբան մը՝ Գեորգ Կիրեղեան, եւ բանաստեղծ Վահան Թէքեան: Կիրեղեան եւ Թէքեան շատ չեն մնացած Երուսաղէմ: «Ասոր իրական պատճառը, - գրած է Զաւէն Ա. Քիւնյ. Արզումանեան,- պէտք է փնտռել Օրմանեան սրբագանի անձնակազմը գործելակերպին մէջ, որ կ'անտեսեր երկու աշխարհականներուն իրաւական ներկայութիւնը եւ ինք կը տնօրինէր ամէն ինչ, առանց խորհրդակցելու անոնց հետ: Թէքեանի դիտողութիւնները յանախ իրաւացի եղած են այս ուղղութեամբ, որ ճանաչուած եւ վրդոված՝ մեկնած է Երուսաղէմէն», Ազգայատում, Գ. Հտ, Ա. Գիրք, Նիւ Եորք, 1995, յօդ. 3238, էէ 126-127: Պատուիրակը պիտի մնար առանձին եւ գործէր երկու տարի 1914-ի Օգոստոսէն 1916-ի Օգոստոս, այսինքն՝ մինչեւ Սահակ Կաթողիկոսի նշանակումը Կաթողիկոս-Պատրիարք Հայոց Թուրքիոյ:
- 754.- ՕԽԽ, է 334: Կիրակոս Պար. Երուսաղէմացի (1846-1850) թէեւ կարն գահակալած, սակայն կրցած էր արդիւնաւոր ըլլալ: Յատկապէս յիշատակուած է իբրեւ շիւնարաբ, «զի բաւական շինութիւններ եւ նշանաւոր նորագործութիւններ» կատարուած էին անոր օրով, ՕԱԳ, յօդ. 2624, ս 3865: Պատրիարքներու ամառային գործածութեան համար անոր շինել տուած յարկաբաժինն է յիշուածը:
- 755.- ՕԽԽ, է 334:
- 756.- Ն, էէ 343-344:
- 757.- ԿՊԿ, սս 925-926:
- 758.- Ն, ս 926:
- 759.- Ն, սս 926-927:
- 760.- Ն, ս 927:
- 761.- Անդ:
- 762.- Ն, ս 928:
- 763.- Անդ:
- 764.- Անդ:
- 765.- Օտեւ, է 339:

SPECIAL OFFER! CLASSIFIED SECTION

DON'T MISS THIS OPPORTUNITY TO ADVERTISE!

NEW AT HORIZON WEEKLY!
A CLASSIFIED ADS SECTION

SPECIAL RATES! / A DISCOUNT OF 60%

Please call (514) 332-3757 to reserve your space now!



Ghadir
Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com



BAKERY AND FINE FOODS

OPEN 7 DAYS A WEEK!
WEDNESDAYS 9am - 7pm
SATURDAY 6AM - 6PM
SUNDAY 8AM - 5PM

LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN



Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5
Tel 416 745 3111
Fax 416 745 9337



ANI
Restaurant

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5



Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9067
annievarbed@hotm.com
www.suttongroupadmiral.com



hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S.

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9



Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON, M1R 2Z5
Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com



I.D.A.
Part of the *Royal* family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Cassandra Pharmacy Inc.

2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**



ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ

Middle Eastern Pizza
Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8
Tel: 416.285.7164

Linda Kharaboyan | Notaire
Notary

Ձեր և տարազան և, իրաւաբանական հարցերն ու, ծրագիրները վստահեցե՛ք մեզի

Vos affaires. À cœur.

Therrien Couture

3111, boul. Saint-Martin O., #500
Laval (Québec) H7T 0K2
t. 450 682.5514 - 855 633.6326
linda.kharaboyan@therriencouture.com
therriencouture.com

VIZUALIS
optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview · Fairview Mall
Pointe Claire

514 695 2555 · VIZUALIS.CA



PHOTO Cristal

(514) 744 4313

Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement

Video - Reproduction

647 Boul. Decarie
VSL Montreal QC
H4L 3L3

photocrystal@hotmail.com
www.photocrystal.com



Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենյակ

KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE •
REER, FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ •
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com



TAXI MIRABEL
450-430-2650

Taxi Mirabel Հայկական հաստատությունը կարիքը ունի
20 հայ թաքսի վարորդի Միությանը շրջանին մեջ:
Հաճեցե՛ք հեռաձայնել Արային (514) 979-1317 քիին:

Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number,
besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**



RE/MAX
RE/MAX 3000 inc.
Agence immobilière

Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker

C 514.519.3543
B 514.333.3000



ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN

POSE D'ONGLES
RÉSINE ET POWDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOUVREMENT SUR ONGLES NATURELS

Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6

Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666


krikormar@gmail.com

FIVE STAR ELECTRIQUE
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM



CENTUM
Metroapp Wealth Solutions Inc.
Licence # 12147

Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian



ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Նոտար եւ իրաւաբանական կորորդատու՝ Ալին Գեքերեճեան

ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Համագրայինի 90 ամեակի ձեռնարկներ՝
Մոնթրեալ 14 Հոկտեմբեր 2018
Թորոնթո 27 եւ 28 Հոկտեմբեր 2018
Կը խնդրուի չխաչաձեւել

ՄՐՆԹՐԷԱԼ

Համագրային Սանահին մասնահիւղի «Պետրոս Ադամեան» քատերախումբ
ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿ
3-4 Նոյեմբեր 2018
Մանրամասնութիւնները յետագային:

ՀՀ Հիմնադրամ Մոնթրեալ
Տարեկան ձեռնարկ
24 Նոյեմբեր 2018

ԹՈՐՈՆԹՕ

ՀՕՄի «Ռուբինա» մասնահիւղի 25-րդ ՏՈՂՄԻԿ ՕՐ նուիրուած Հայոց Պետականութեան վերականգնման 100-ամեակին: 1 Դեկտեմբեր 2018, Թորոնթոյի Հայ կեդրոնէն ներս: Զօնուած Հայաստանի փառքը եւ պետականութեան հիմքը հանդիսացող Հայոց Թագաւորական Արքայատոհմերուն, Արարատեան, Արտաշէսեան, Արշակունեան, Բագրատունեան եւ Կիլիկեան Թագաւորութիւններուն: ԿԸ ԽՆԴՐԵՆՔ ԶԽԱԶԱՋԵՒԵԼ:

ՄՐՆԹՐԷԱԼ

Համագրայինի վերանորոգուած «Մուշեղ Իշխան» գրադարանի ժամանակացոյց.- Մարտի սկիզբէն, երեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը կ.Յ. ժամը 1:00-5:00 իսկ Կիրակի օրերը առաւօտեան ժամը 11:00-էն կ.Յ. ժամը 2:00: Մոնթրեալի Հայ կեդրոն, գետնայարկ, ՀՕՄ-ի Ծաղկոցին կից ☎ 514 337-7753: Գրադարանը բաց է գրասէր հասարակութիւնը գոհացնելու համար:

Պոստը՝ Montreal Museum of Fine Arts, Napoleon (Art and court life in the imperial palace) երեքշաբթի Ապրիլ 10 առաւօտեան ժամը 10-ին, մեկնում Հայ կեդրոնէն: Մանրամասնութեանց համար դիմել՝ diroug@gmail.com

ԺՈՂՈՎՆԵՐ

ՀՕՄ-ի ՄՐՆԹՐԷԱԼԻ «ՍՕՍԷ» ՄԱՄՆԱՃԻԻՂԻ ԱՆԳԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. Երեքշաբթի, 3 Ապրիլ 2018-ին: Երեկոյեան ժամը 7:30ին հիւրասիրութիւն, 8:00-ին՝ ժողով:

ՀՕՄ-ի ԼԱԻԱԼԻ «ՇՈՒՇԻ» ՄԱՄՆԱՃԻԻՂԻ ԱՆԳԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. Զորեքշաբթի, 4 Ապրիլ 2018-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Լաւալի Հայ կեդրոն:

ՀՕՄ-ի ԹՈՐՈՆԹՈՅԻ «ՌՈՒԲԻՆԱ» ՄԱՄՆԱՃԻԻՂԻ ԱՆԳԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. Երեքշաբթի, 3 Ապրիլ 2018-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Թորոնթոյի Հայ կեդրոն:



Ունկնդրեցէ՛ք Գանատայի տարածքի սփռուող հայկական ռատիոժամերը՝

ՎԱՆԳՈՒՎԸՐ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM
Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00

ԹՈՐՈՆԹՕ- «Կիլիկիոյ Ձայն» CHTO AM 1690
Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00

ՄՈՆԹՐԷԱԼ- «Հայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM
Երկուշաբթի երեկոները՝ ժամը 9:30-12:00
Շաբաթ առաւօտները ժամը՝ 7:30-9:30
Կիրակի առաւօտները ժամը 7:00-8:00
«Վանայ Ձայն» 1450 AM
Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00

ՀԱՄԻԼԹՆ- «Հայ Կեդրոնի» ռատիոժամ CFMU 93.3 FM
Կիրակի առաւօտեան 10:00-11:00
cfmu.mcmaster.ca

Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը՝ / Visit our new website
www.arsarmenianschool.ca



Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼԱՒԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ
PERMIS DE QUÉBEC
3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677



ÆTERNA
Complexe funéraire • Crématorium
Funeral Complex • Crematorium

ComplexeAeterna.com
514 228-1888

POUR UNE CÉRÉMONIE CONTEMPORAINE
Nouvelle alternative dans le domaine funéraire à Montréal

FOR A CONTEMPORARY CEREMONY
New alternative in funeral services in Montreal

ALINE BEKEREJIAN
NOTAIRE • NOTARY
ՆՈՏԱՐ Ալին Պեքերեճեան

Achat	Առեւտուր	Purchase
Hypothèque	Անշարժ Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսատում	Refinance
Mandat	Պատուէր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Mariage	Ամուսնութիւն	Marriage
Procuration	Փոխանորդագիր	Power of Attorney

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5
T 514.382.7222
F 514.381.1818
aline.b@notarius.net
www.abnotaires.com

Շառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

horizon
HORIZON Hebdomadaire arménien Armenian Weekly
Publié par / Published by Les Publications Arméniennes (1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription Canada
2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylva Ehramdjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylvia@horizonweekly.ca
Courier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921
Ժագ Վարպետեան, (416) 722-9225

Վարչի Խմբագիր
Վահագն Գարագաշեան
Վարչական պատասխանատու
Սիլվա Պաշոյեան
Քարտուղար Մարինա Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր
Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն Վիգէն Արքահամեան, Թինա Սիլվահեան
Չեռատրում՝ Նէնսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնա Թիթիկեան

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիրմէնքաչ

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada

Canada

ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿ



ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ) - Փորձե անելի համարձակ ըլլալ: Աւելորդ մանրամասնութիւններով մի՛ գրադիր, կարիքը չկայ այդքան դիրազգաց ըլլալու: Երկմտութիւնը անդին նետ է յառաջացիր յարաբերութեանդ մէջ: Ժամանակ տրամադրէ սիրային կեանքիդ:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) - Ամպոտ է սիրային կեանքդ այս շրջանին, բախտաբեր չէ այս ժամանակաշրջանը եւ շղային կը դարձնէ քեզ: Վերջերս հին իրավիճակներ կը պրպտես եւ անմիաստ տեղը կ'անհանգստանաս: Երբեմն անցեալը պետք է փոշիի տակ ձգել:

ԵՐԿՈՒՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) - Այս շրջանը շատ նպաստաւոր է մտեցում ցուցաբերելու եւ համերաշխութեամբ գոյակցելու կողակիցիդ հետ: Յակառակ ունեցած անիմաստ տատամսումներուդ պիտի յայտնուի, թէ սիրեցեալդ անհամբեր կը սպասէ, որ դուն ըլլաս նախաքայլը առնողը:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) - Շուարած ես այս շաբաթ, հարցումներու տարափ մը կը տողանցէ մտքիդ մէջ եւ կը չարչրկէ քեզ: Սիրեցեալիդ հետ յաճախ բախումներ պիտի ունենաս, սակայն մի՛ մտահոգ ուիր, կեանքի ընկերդ պիտի փորձէ չափազանց հասկացողութիւն ցուցաբերել:

ԱՌԻՇ (24 Յուլիսէն 23 Օգոստոս) - Աշխոյժ ես այս շաբաթ եւ կենսուրախ: Շուրջիններդ վերջապէս պիտի գնահատեն քու գեղեցիկ ներաշխարհիդ, բարիութիւնդ եւ իրաշալի բնաւորութիւնդ: Քիչ մը հոգ տանելու ես արտաքին գեղեցկութեանդ, արտաքինը ներքինը թափանցող հայելին է:

ԿՈՅԱ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) - Ձերմ հանդիպում մը պիտի ունենաս, որ հին, խամրած եւ մոռցուած զգացում մը պիտի արթնցնէ մէջդ: Այս հանդիպումը պիտի փոխէ ամբողջ կեանքի ուղիդ: Շուրջիններուդ հետաքրքրութեան առարկայ պիտի դառնաս:

ԿՇԻՈՔ (24 Սեպտեմբերէն 23 Յոկտեմբեր) - Ռոմանօք շաբաթ մը պիտի ունենաս: Յետեւաբար փորձէ բոլոր խոչընդոտները վերացնել եւ սիրեցեալիդ հետ հաճելի պահեր ապրիլ՝ հեռու առօրեայի տաղտուկէն եւ իրարանցումէն: Ծակատագրական որոշումներու շաբաթ մը պիտի ըլլայ:

ԿՈՒԻՇ (24 Յոկտեմբերէն 23 Նոյեմբեր) - Դուն քաջատեղեակ ես, որ յամառութիւնը միշտ կը վնասէ սիրային յարաբերութեանդ: Կը սիրես միշտ քու կարծիքդ պարտադրել եւ իշխող հանդիսանալ: Այս մէկը պատճառ կը դառնայ ձեր միջեւ անհամաձայնութիւններու, հետեւաբար անելի հասկացողութիւն ցուցաբերել:

ԱՐԵՂՍԱՌՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) - Սիրոդ կը թմրայ նոր եւ զօրաւոր զգացումներով, կարծես կ'ուզես ամբողջ աշխարհը ընդգրկել: Ծաբաթը շատ նպաստաւոր պայմաններ պիտի ստեղծէ քեզի համար՝ ըմբռնելու կեանքն ու բնութեան գեղեցկութիւնները:

ԱՅԾԵՂԶԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) - Շատերու կը հանդիպիս, նոր անձնաւորութիւններու, որոնք մէջդ նոր զգացումներ կարթնցնեն: Եթէ կապուած չես եւ սիրոյ ծարաւը կը գգաս, այս շաբաթ անպայման պիտի հանդիպիս երկրորդ կէսիդ եւ հաւանաբար շուտով լուրջ քայլ մը առնելու որոշում առնես:

ԾՈՎԱՆՈՅԾ (21 Յունուարէն 19 Փետրուար) - Դժուարութիւն ունիս սիրեցեալիդ հետ հասկցուելու, կը մեղադրես զինք անտարբերութեան եւ սառնասրտութեան, նոյնիսկ անտեսումի համար: Բուռն վեճեր կը ծագին, բայց այս բոլորին հիմնական դրդապատճառը քու անկայուն վիճակդ է:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) - Բացառիկ շաբաթ մը կը սպասէ քեզ, բոլոր ասպարեզներուն մէջ յաջողութիւն պիտի գտնես, յատկապէս՝ սիրային յարաբերութեան հարցով: Հրաշալի պահեր պիտի ապրիս սիրեցեալիդ հետ, կը թարմանան բոլոր զգացական ապրումներդ:

Ս. ԳԵՌԳ ԵԿԵՂԵՑԻՈՑ, ԱՒԱԼ Բարեպաշտուհի մը Տէր Ողորման կը խնդրէ 10
Ողբ. ԱԼԷՔՍԱՆՏՐ ԱՐՈՒՇԵԱՆԻ մահուան առթիւ,
 փոխան ծաղկեպսակի Nassim Abi Aad Family 50
 Samia Sidawi Family 100
 Yvonne Soukar-Farah Family 20
 Albert Sucar Family 30
 Mouna Sucar Family 30
 Samir Sucar Family 20
 Olympia, Manuel Siderides 20
 Leila Sucar Family 30
 Fadi Hajjar Family 100
 Helene Kawkab Family 200
 Joseph Rezko Family 200
 S.S. Վրէժ Քէօշկէրեան 20
 S.S. Սերոբ, Թամար Գարայեան 20
 Ա.Օ Քէշիկեան 50
 Բժ. ձորճ եւ տիկ. Մարալ Աւագեան 30
 S.S. Լեւոն Արուշեան եւ զվկնք. 100
 S.S. Մարտիկ Տէկերմէնեան 20
 S.S. Կապի Մաթոսեան 20
 S.S. Նաչիկ Ստամպուլեան 20
 S.S. Սեւան Մանուկեան 50
 S.S. Սարգիս Թալալի 30
 Տիկ. Արարթ Տէրտէրեան, Մարալ եւ Յակոբ 20

Ողբ. ԱԼԷՔՍԱՆ ՉԱՔԵԱՆԻ մահուան 14-րդ տարելիցին առթիւ:
 S.S. Ռաֆֆի Չազեան եւ զվկնք. 500
 Շաբէ Չազեան 30
 Անի Չազեան ընտանիք 30
 Ստեփան Չազեան 20
Ողբ. ՎԱՐԳՈՒՆԻ ԱԼԱՎԷՐՏԵԱՆԻ մահուան 10-րդ տարելիցին առթիւ:
 S.S. Մարգար, Մարիա ձերեճեան 40
 S.S. Վարդան, Մարիկ Պարոնեան եւ զվկնք. 30
 S.S. ձորճ, Մուսն ձերեճեան եւ դուստր 20
 S.S. Ասատուր, Լեւոն Ալահվերտեան եւ զվկնք. 50
 S.S. Համլէթ ձերեճեան եւ զվկնք. 50
 S.S. Գեղորգ, Մանուշակ Միրզոյեան եւ Արի 50
Ողբ. ԱՍՍՏՈՐ ԾԱՄԼԵԱՆԻ մահուան 12-րդ տարելիցին առթիւ:
 եւ Համայն ԾԱՄԼԵԱՆԻ եւ ՉԱՔԱԼԵԱՆԻ ընտանիքներու ննջեցեալներու յիշատակին:
 Տիկ. Մարի Շամբեան 20

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԳԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
 Իւզազին Ժանկէթ Թումայեան 25
«Տէր Ողորման» խնդրանք
 Ալիս Տէր Նաշատուրեան 25
Երաւարդ Էլոյեանի 4-րդ տարելիցին
 Ժանկէթ Թումայեան 100
 Լորիս Մայրոյեան 50
Աստղիկ ՕՇԱՆՆԵԱՆԻ-Յարութիւնեանի Ա. տարելիցին
 Յարութիւն Յարութիւնեան 100
 Յակոբ, Անահիտ Տէր Նաշատուրեան, զվկնք. 50
 Արմինէ Յարութիւնեան, զվկնք. 50
 Բաֆֆի, Գայանէ Նազարեան, զվկնք. 100
 Մարի ՕՇաննէսեան 30
 Ալիս Տէր Նաշատուրեան 30
 Վազգէն, Մարինա Պորճեան 30
 Բաֆֆի, Մովսիս Փիլիպոսեան 50
 Պայծառ, Ֆրէտ, Արա Նազարեան 80
 Տ. եւ Տ. Արքայազն Աւետիսեան, զվկնք. 20
 Այտա Նազարեան 50
 Վազգէն, Արմինէ Ասատուրեան, զվկնք. 50
 Սազո Մընըշեան 50
 Տ. եւ Տ. Միսաք ՕՇաննէսեան, զվկնք. 40
 Վարոտ, Հայկուհի Ասատուրեան, զվկնք. 50
 Վարդգէս, Մարիան Էճրամճեան, դստերը 50
 Համբարձում ՕՇանեանի մահուան (Արեւիկա) 40-ին,
 Կարա Լազարոս ՕՇանեանի հոգւոյն Մարի ՕՇանեան, զվկնք. 50
 Յակոբ Գանտեճեանի 4-րդ տարելիցին
 Իտա Գանտեճեան, դստերը 50
Նազելի Գարայեան Սուլեանի 13-րդ տարելիցին,
 Կարա Մարթա, Մանուշակ, Պաթուհ, Մարիկ Գարայեաններու,
Վերթին Մաթոսեանի հոգւոյն
 Բաճէլ Գեղեցեան, զվկնք. 40
 Արքայաշտուհի մը 20
Սերճույս Գազանճեանի եւ Ազապի Ասատուրեանի հոգւոյն
 Լեւոն, Վարսենիկ Գազանճեան 30
 Ճանիկ, Մարի Առաքելեաններու 12-րդ տարելիցին,
 Գոհար Ասլանեանի 28-րդ տարելիցին
 Վաչէ, Սիլվա Առաքելեան 50
 Ճէմիլ, Մարի, ձորճ, Հերմին, Զօհրապ, Անճէլ Մուրատեաններու, Կարա Միսա, Թովմասա, Արարթի, Արտեմիս Գոհարաշեաններու հոգւոյն
 Տ. եւ Տ. Վարդգէս Մուրատեան,

զվկնք. 50
Գեղորգ Գրիգորեանի, Յակոբ, Մարի Գանիկեաններու հոգւոյն
 Նիկոլ, Սոսի Գանիկեան, դուստր 20
Նազար Զարմինեանի Ա. տարելիցին,
Պաշիկ, Յովհաննէս Ապուրազուտեաններու,
Աւետիս, Էֆրոն Զարմինեաններու հոգւոյն
 Կարո, Սեւան Զարմինեան, զվկնք. 25
 Գեղորգ, Անի Զարմինեան, զվկնք. 20
 Վազգէն, Լեւոն Պարսիկեան, զվկնք. 30
 Հերմին Պետրոսեան 20
Հայկազուն, Արփիկէ Էյլէնճեաններու,
Յակոբ, Կիլիկար ձեյլատեաններու հոգւոյն
 Տ. եւ Տ. Արքայազն Էյլէնճեան, զվկնք. 30
Նոսրով Տիգրեանի հոգւոյն,
Նաճիկեան գերդաստանի ննջեցեալը
 Արարթ Տիգրեան, Վիկի, Նելլի Պոյանեան, զվկնք. 50
Գրիգոր Սասունեանի,
Անահիտ Արքայազնեանի 10-րդ տարելիցներուն,
Արտալազը Հաջազորճեանի հոգւոյն
 Սեզա Սասունեան, զվկնք.՝ Արմէն, Արա, Ալին 40
 Վաչէ Տէմիրճեան 20
Եղիաբաբէ Տէր Սահակեանի հոգւոյն
 Մու-Select Inc. 100
Տէր Արմէն Ա. ՔՆԿ. Իշխանեանի յիշատակին
 Անահիտ Գուլումճեան 60
Հ.Օ.Մ.ի Հանդուցեալ անդամ-անդամուհիներու, բարերարներու, վերջին տարուան ընթացքին յանդիմանած ընկերակիցներու՝
Մարի Փօշեանի, Պերթա Միլասեանի Հելլըրի, Փրոֆ. Շաբէ Տէր Միլեռնեան Միլասեանի, Արմէնուհի Տէմիրճեանի, Շաբէ Պէզճեանի, Գրիգորի Շաճեանի, Լեւոն Տէր Գեղորգեանի հոգւոյն
 Հ.Օ.Մ.ի Մոնթրէլի «Սուէ մասնաճիւղի վարչութիւն» 200
 Հայկո Նահապետեան 100
 Թամիկ Նահապետեան 100
 Նուպար Սարաֆեանի 40-ին
 Սոնա Սարաֆեան 20
 Բիլլըրտ, Թային Եղիսեան, զվկնք. 50
 Բուտովի, Նուշիկ Մելիք, զվկնք. 50
 Սուէ Սարաֆեան 50
 Թօփճեան Էդրըք. 50
 Ալիս Մանուշեան 20
 Յովհաննէս Նահապետեան 20
Տրդատ Զօհրապեանի 40-ին
 Վահան, Ռեւան Զօհրապեան, զվկնք. 50
 Էտի, Անի Կարապետ, զվկնք. 300
 Ժազ, Նէնի Գրիգորեան, զվկնք. 60
 Սահակ, Արտա Զօհրապեան 50
 Արամ, Լուիզ Նաշանեան 60
 Մոնիք, Յասմիկ Կատ 50
Միսաք Վանկեանի 16-րդ տարելիցին, Կարա Հայկ, Նուպար, Փերուզ Վանկեաններու հոգւոյն
 Անահիտ Վանկեան, Հայկ, Վալերի Վանկեան, զվկնք. 100
 Լեւոն, Անի Եազեան, զվկնք. 30
Վրէժ Մէրէնիկեանի 14-րդ տարելիցին
 Թէնի Մէրէնիկեան 100
 Նորայր, Մովսիկ, Նինա Մէրէնիկեան 100
 Միհրան, Սիլվարդ Մուրատեան 20
 Կարո, Ալին Մուրատեան, զվկնք. 20
Լեւոն, Զարուհի Շէօճճէլեաններու, Յակոբ, Սարա Տարազեաններու հոգւոյն
 Աւետիս, Ալիս Շէօճճէլեան 20
Արշալոյս Մանուկի 10-րդ տարելիցին
 Նայիրի Մանուկ, Ռաֆֆի, Յասմիկ Թուրիկեան, դստերը,
 Վաչէ, Լանա Մանուկ, Կարո, Լուի Մանուկ, դստերը 150
 Սեզա Թուրիկեան 30
Յովսէփ Էյլէնճեանի, Յակոբ, Ալիս Պազապեաններու հոգւոյն
 Տ. եւ Տ. Արքայազն Էյլէնճեան, զվկնք. 20
Հրանդ Գուլումեանի 12-րդ տարելիցին
 Նատիա Գուլումեան, Կարո, Սիլվա Նազիրեանեան, զվկնք. Տարօն 100
Լեւոն Սահակեանի Ա. տարելիցին,
Կարա Բաբգէն, Նէլթա Շահինեաններու հոգւոյն
 Սահակ, Մայիլտ Սահակեան, զվկնք.

50
 Չուարթ Այվազեան, ընտր. 20
 Սազօ-Վաչէ Պոյանեան 20
 Մանուէլ, Ազնիս Մարաշեան 50
 Համրիկ, Սոֆի Սարգիսեան 20
Ովսաննա Գազարեանի մահուան (Հայաստան) 40-ին
 Ժողէֆ, Անայիս Թուրիկեան, զվկնք. 25
Պաշիկ Սարգիսեանի 38-րդ տարելիցին
 Ալիս Սարգիսեան 20
 Տ. եւ Տ. Աւետիս Սարգիսեան, զվկնք. 20
 Տ. եւ Տ. Ներսէս Ղազարեան, զվկնք. 20
Ս. ԱՍՏՈՒԱՄԱՄԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ, ԹՈՐՈՆԹՈ
Շահէ Քէլապազեանի մահուան առթիւ
 Յայ Կեղրոնի Երէցներու Ընկերակցութիւն 50
 ՀՄԸՄ Թորոնթօ Քոնֆու 100
 Սիրարփի Աթիկեան 20
 Վազգէն եւ Լիսի Թէրզեան 50
 Յարութի եւ Սեզա Գասապեան 50
 Մոսիկ եւ Ռիթա Քարկոցեան 40
 Նորայր Պէրզեան 100
 Մարի Արքայազն 40
 Տէր եւ Տիկ. Հրաչ Այնճեան 50
 Միլերոն եւ Սոսի Քարկոցեան 50
 Լորիկ Գաթրճեան եւ ընտանիք 30
 Մայք եւ Լուիզ Թալաթիսեան 30
 Ներսէս եւ Ռեմոն Շիթիկեան 100
 Ստեփան եւ Հուրի Նահապետեան 50
 Չուարթ Պոլոսեան 20
 Նորա Սերոբեան 20
 Նուշիկ Պէրզեան 20
 Գրիգոր եւ Արփի Շիթիկեան 50
 Լուիզ Պարտազեան 20
 Կարո եւ Ֆարա Մարտիրոսեան 50
 Ստեփան եւ Սարազեան 25
 Սահակ եւ Արարթ Նարման 20
 Ժողէֆ եւ Մայտա Մուրատեան 30
 Թազուհի Քաշեան 25
 Արթուր եւ Սիրանուշ Նաշեան 50
 Ալիսեա Մայլասեան 50
 Գորին Արքայազնուհի 50
 Իսկուհի Գրիգորեան 20
 Լուիզ Հատատ 30
 Ներսէս եւ Գեղուհի Փիլանճեան 25
 Վարդան եւ Այտա Ֆրանքեան 30
Պաշիկ Գանիկեանի մահուան առթիւ
 Զեփիւրա Քէօշկեան 50
 Ազատ եւ Արմիկ Սաֆարեան 20
 Ժիլկէթ Սարգիսեան 25
 Վրոյր եւ Շողիկ Մարտիրոսեան 20
 Զեփիւրա Քէօշկեան 20
 Գանիկ Գանիկեան եւ ընտանիք 25
 Մանուկ Գուլումեան 20
 Յարութի Սէրգիս 25
 Յարութի եւ Թամար Մաթոսեան 50
 Տրդատ ՕՇան եւ ընտանիք 20
 Գեղորգ եւ Վարդուհի Միլերոնեան 40
 Մովսիս Արքայազն եւ ընտանիք 20
 Սարգիս Պաղտոյեան եւ ընտանիք 20
 Լուիզ Պարտազեան 20
 Սաթիկիկ Թալաթիսեան 20
 Յովհաննէս եւ ընտանիք 125
 Մարի Տարազեան 20
 Կիրո ձեյլանեան 40
 Վահէ Քոզմոնոպոլ 25

ՀՕՄԻ «ՍՕՍԷ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ, ՄՈՒԹՐԵԱԼ ԸՆԴՀԱՆՈՐ
 Վարդգէս Տոլապեան 100
 Անահիտ Գուլումճեան 50
 Գասապեան Պոլոս 50
 Լուիզ Թալապեան 50
 Անահիտ Պէրզեան 30
 Լեւոն Գատեան 30
 Վահան Գազանճեան 25
 Լուսինա Փալանճեան 20
Ընկերային յանձնախումբին
 Գարոյին Գազանճեան 300
 Արտեմիս Պարտազեան 250
 Իզմինի Գարաօղլանեան 100
 Աճմարանեան Ալպէր 50
 Եղիկ Մարկոսեան 50
 Սարգիսեան Հերմին 40
 Սուլթան Փալանճեան 20
 Վերթին Պէրզեան 20
Տարեցիկ այցելող յանձնախումբին
 Անիթինի Պուլոս 100
 Աստղիկ Աֆարեան 50
 Անիթինի Պուլոս 100
 Անահիտ Աֆարեան 50
 Անահիտեան Կարապետ Էնտարկին Շաբէ Կէօնճեան 1000
 Հայկո Նահապետեան 200

Անի Մաթապեան 100
 Վարդուկ Պէրզեան 50
 Արմինէ Կարապետեան 50
 Անի Գարայեան 40
 Ռուսը մը ընկերուհիներ 155
ՀՕՄԻ «ՌՈՒԹԻՆԱ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ, ԹՈՐՈՆԹՈ
 Ան Թէրզեան 50
 Կարինէ Տէր Յովակիմեան 50
 Կիրտա Քէլապազեան 50
 Վահան եւ Արտա Մահապետեան 200
 Անի Գուլումճեան 10
 Շաբէ Ստեփանեան 150
 Անի Հոթիոյեան-ժողի 500
 Հելլէն ժողի 250
 Թէնի Մովսիկ 250
 ձորճիկ Մարի Պերճ ձիորճի 250
 Արմէն եւ Արշա Ասատուրեան 100
 Սիմոն եւ Մարալ Հասրճեան 500
 Momentous Occasions Inc 500
ՀՕՄ-ի Ընկերային Մասնաւորութեան Գրասենտակին
 Սիլվարդ Մանճատեան 150
 HYFE RIDERS M/C 200
ՀՕՄ-ի Ռուբինա Մանանճիւրի Տոնաւաճառին
 Կիրտա Քէլապազեան 50
Վրէժ Զաքարեանի մահուան առթիւ
 Մանուէլ եւ Սիլվա Պետրոսեան 20
 Կերի Պոյանեան եւ Ընտանիք 100
 Մատթէոս եւ Մարո Տէրտէրեան 40
 Հէնրի եւ Զեփիւրա Տորոս 40
 Անճէլ Բանիկեան 50
 Վահան եւ Ալին բանիկեան 50
 Ժիրայր եւ Ռիթա Փոլ Փիթըր 30
 Հրայր եւ Արտա Շահինեան 50
 Ալեքս եւ Անի Թարգի 100
 Պարգուհի Զաքարեան 100
 Մարալ Զաքարեան 50
 Սարգիս եւ Իրէն Թիլիմի 25
 Մայքըր եւ Անի Հոթիոյեան-ժողի 50
ՀՕՄ-ի Ռուբինա մասնաճիւղի "Դրօ Նահապետ" Հիմնադրամին
 Սոսի Տէրտէրեան 500
Ժիլկէթ Թալաթի մահուան
 Սարգիս եւ Իրէն Թիլիմի 25
Կիլկէնա Աֆարեանի մահուան առթիւ
 Պետրոս եւ Անահիտ Պուլոս 100
Ժ. ՕՇաննէսեանի մահուան առթիւ
 Մայքըր եւ Անի Հոթիոյեան-ժողի 50
 Հրայր եւ Արտա Շահինեան 50
 Համազգային «Սանահին» մասնաճիւղի վարչութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ Հեւտեալ անդամներուն,
 Ամանորի Հաւաքին առթիւ իրենց կատարած նուիրատուութեանց համար:
 Սիլվարդ Զուրիբեան 50
 Ռաֆֆի եւ Սոսի Աճէմեան 200
 Յակոբ եւ Մովսիկ Կուտեան 100
 Յակոբ եւ Աննա Պուլկարեան 100
 Պերճ եւ Նայիրի Զաքարեան 50
 Պետրոս եւ Մովսիկ Գահլէճեան 100
 Արամ եւ Յասմիկ Մանուկեան 75
 Զեփիւրա Լուլու 50
 Ռաֆֆի եւ Ժիլկէ Ֆրանճեան 150
 Վիկէն եւ Անի Սարգիսեան 75
 Ռահէլ Տեմիրճեան 100
 Վազգէն Տէր Գուլումեան 300
 Յակոբ եւ Տրդուկ Մանճիկեան 100
 Պետրոս եւ Մայտա Գարբիլեան 40
 Յովհաննէս եւ Սեզա Գաթարեան 100
 Լեւոն եւ Ֆիլոր Պենիկեան 75
 Արա եւ Լիսի Ալեքսանեան 100
 Վարդան եւ Նայիրի Փափախեան 100
 Ժան եւ Արտեմիս Միլերոնեան 100
 Վարութի եւ Ռիթա Շամբեան 500
 Եղիս Պարտազեան 50
 Յարութի եւ Մարալ Պէրզեան 50
 Ար



ardziv



Ապրիլ 2018

Ուժը եւ փոխհատուցման ճանապարհը

«Իրաւունքը ուժի հասկացողութիւն է, այլ ոչ տրամաբանական»:

Հայոց սպարապետ Գարեգին Նժդեհ իրաւունքը այս բառերով կը սահմանէ, որ կարճ բացատրութիւնն է ներկայ իրականութեան: Ակնարկ մը նետելով հայոց պատմութեան վրայ կը նկատենք, որ Հայ դատը նոյնպէս ենթակայ է յիշեալ իրաւունք-ուժի օրէնքին: Այդ պատճառով ալ Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացին անընդհատ խոչընդոտ հանդիսացած են գերպետութիւնները, որոնք բնականաբար իրենց սեփական քաղաքական եւ տնտեսական շահերը կը հետապնդեն թուրքոյ հետ: Յենելով այս դառն իրականութեան՝ կրնանք պատկերացնել, թէ ինչպիսի՞ն է փոխհատուցման ճանապարհը:

Առաջին մտածումէն հաւանաբար հայուն մտքէն կ'անցնի նիւթական հատուցում, երբ հարցը կը վերաբերի հայկական խնդիր լուծման: Սակայն երբ կը խորանանք, կը նկատենք, թէ ցեղասպանութեան ենթարկուած ազգի մը արիւնը եւ հայրենիքի ինխուն տոկոս բռնագրաւուած հատուածը արդարութեան նժարին դնելով, ի դիմաց որեւէ նիւթական արժէքի, զայն հաւասարակշիռ չի դարձներ: Ուրեմն մեր ազգի հիմնական նպատակը պէտք է ըլլայ Սեւրի դաշնագրին եւ 1919-ի Ուիլսոնի ուրուագծած քարտէսին հիմամբ եւ ամենակարեւորը՝ Ահարոնեանի կամքով պահանջել մեր իրաւունքները, եւ ոչ թէ նիւթական հատուցման դիմաց տարածքներու զիջումով:

Հայկական դատը տակաւին ողջ է եւ կը գոյատեւէ: Ան պիտի հասնի իր արդար լուծման, թէ՛ համայն հայութիւնը եւ յատկապէս երիտասարդ տարրը հաւատայ իր ցեղի, երկրի, լեզուի եւ մշակոյթի հզօրութեան, ապրի ու աշխատի յանուն իր հայրենիքի վերելքին եւ կառուցած մնայ իր պապենական հողին: Միայն ա՛յն ժամանակ մենք կը տիրանանք Նժդեհի յիշած ուժին:

Յովիկ Ղազէեան, «Սիմոն Զաւարեան» մասնաճիւղ

Շարունակե՛նք մեր պայքարը յանուն մեր արդար դատին

Նախքան սկսիլս պէտք է կշեմ, թէ մեծ տարբերութիւն կայ ճանչնալուն՝ իբր գիտակցութիւն եւ ծանօթացում, եւ ճանչնալուն՝ իբր արարքի պատասխանատուութեան ընդունելութիւն եզրերուն միջեւ:

Որպէս հայ ժողովուրդ, մէկ դարէ ի վեր կը ջանանք ճանչնալ տալ մեր դատը արար աշխարհին, նախ իբր ծանօթացում մեր պատմութեան, ապա իբր ընդունում մեր մարդկային իրաւունքներուն: Որպէս հայ ժողովուրդ մեր պայքարը կը շարունակենք մինչեւ այսօր, այս անգամ մեր կողմնացոյցը մղելով դէպի համաշխարհային ճանաչում, որով կարելի պիտի ըլլայ ճշում բանեցնել թրքական

իշխանութիւններուն վրայ՝ ընդունելու մեր դատը: Այսօրուան դրութեամբ 3 գլխաւոր կողմեր Հայ դատին լուծման դաւադրացում կը պատճառեն: Առաջինը՝ թրքական իշխանութիւնն է, որ մերժելով մեր արդար պահանջները՝ կը խոչընդոտէ մեր իրաւունքներուն տիրանալու մեր ջանքերը:

Երկրորդը՝ գերպետութիւններն են, որոնք իրենց քաղաքական շահերուն հիմամբ կը վերաբերին Հայ դատին հետ: Բոլորս քաջ գիտենք Գերմանիոյ դերակատարութիւնը Հայոց ցեղասպանութեան ծրագրին մէջ: ԱՄՆ բաւարարուեցաւ ցեղասպանութեան արձանագրութեամբ Յէրի Մորկոնթոմի կողմէ, Անգլիան օգտագործեց մեր դատը, իբր ճշման փաստաթուղթ, օսմանեան կայսրութեան վրայ ճշում բանեցնելու համար, Ուիլսոն Սեւրի դաշնագրով մեզի հայրենիք խոստացաւ եւ Լոզանով զայն չեղեալ նկատեց, Լենին դաւաճանեց մեր կամաւորական գունդերուն: Բոլորն ալ անտարբեր մնացին Հայ դատին ու մեր պահանջներուն հանդէպ:

Երրորդը՝ այն թուլամորթ հայն է, որ կ'ուրանայ իր դատը՝ տարուելով իր անձնական շահերով:

Սիրելի՛ ընկերներ եւ զաղափարակիցներ, թող որ ցոյց տանք մեր կեցուածքը համայն աշխարհին, չբաւարարուինք ցեղասպանութեան ցաւալի նկարները տարածելով, չբաւարարուինք խորհրդարանի մը Հայոց Ցեղասպանութիւնը ընդունելով, այլ շարունակենք մեր պայքարը բոլոր ճակատներուն վրայ: Ոմանք Արցախեան իրավիճակը կը պատճառաբանեն, ըսելով թէ Արցախը կը կորսնցնենք, եթէ ուրիշ ճակատներ բանանք, բայց չեն մտածեր, թէ այսպիսով պատճառ տուած կ'ըլլանք թուրքին եւ ազերիին՝ երկարածագելու Արցախի այս իրավիճակը: Ի՞նչ է մեր կորսնցնելիքը, ի՞նչը աւելի սուղ է մեր պատիւէն ու արժանապատուութենէն: Մենք վաղուց սորված ենք ետրի փոխան զենք գրկել, չենք վախճար աքսորէն, ձերբակալուելէն, բանտի շղթաներէն, պատրաստ ենք նահատակուելու յանուն մեր արդար՝ դատին, մենք երդուած ենք այս ճամբայէն քալել՝ արիւնտ դրօշով:

Մեր հարուածները թող ուղղուած ըլլան միայն թուրքոյ. ոչ թէ սփիւռքի մէջ գտնուող թուրքին, թող ներքին սիւները ցնցենք եւ տապալենք այս անարդար բարբարոսը, եւ եթէ այսպէս մեզ համայն աշխարհը, մեր պատասխանը թող ըլլայ. «Ո՞ր էիք, երբ Հրանդ Տիկը սպանուեցաւ, Գուրգէն Մարգարեան կացինահարուեցաւ, Քեարամ Սլոյեան գլխատուեցաւ, եւ զիրենք սպանողները պարգեւատրուեցան»:

Կ'ուզեմ աւարտել երինգի խօսքով.

- Արդարութիւնը մէկ ձեռքով բռնած է կշիռը, միւսով սուր, կշիռքով կը կշռէ իրաւունքը, սուրով կը պաշտպանէ եւ կը հաստատէ զայն, սուրը առանց կշիռքի մերկ բռնութիւն է, կշիռքը առանց սուրի իրաւունքի անզօրութիւն»:

Մոսիկ Արզումանեան, «Լեւոն Շանթ-Քեկոր Աշոտ» մասնաճիւղ

Reconciliation is in Limbo

103 years after the Armenian Genocide, the relations between Turkey and Armenia are almost non-existent, hostile and chaotic. Although political reconciliation is currently not envisaged, it is crucial to understand why reconciliation is necessary, but also why it is currently an impossibility. But let's let our imagination run amok.

Political reconciliation requires four essential components- namely, truth, repentance, justice, and forgiveness. It is important to note that the order is particularly imperative: for example, forgiveness cannot come before justice.

Truth is the first step necessary for reconciliation. There needs to be a creation of a shared history, instead of the contradictory histories that we have today. Historical revisionism and the glorification of the "illustrious" past are still the norm in Turkey. Nonetheless, the process of awakening is slowly gaining ground. As Thomas de Waal notes, "After a long period of collective amnesia, a flood of books have appeared focusing on the legacy of Armenians in Turkey. There is growing recognition of the thousands of Islamized Armenians and relative liberalization", despite Erdogan's power grab.

After accepting the truth and establishing a common version of history, comes repentance. Repentance means reviewing one's actions and feeling regret for past wrongs, which is accompanied by commitment to change for the better. What makes genocides possible is dehumanisation and delegitimization of the "other". Therefore, repentance involves recognizing Armenians' humanity, recognizing the Genocide, accepting its nihilistic nature, and putting an end to the usage of the same policies against the current minorities in Turkey.

After repentance, justice is necessary. It must be noted that recognizing and then leaving a crime of this magnitude unpunished would be unthinkable and set a terrible precedent. Justice will have to involve not only an official apology, but also monetary compensation and the return of occupied lands.

Forgiveness is the last step, optional only after justice has prevailed. Contrary to political reconciliation, forgiveness is a silent, intimate, and private affair. Political actors cannot forgive on behalf of individual victims or their descendants.

But let's come back to reality. It is extremely hard to even talk of reconciliation and its components because offences keep happening. Genocide denial is still state policy in Turkey. Reconciliation is possible only when violence between groups comes to a halt. Arguably, it hasn't. Hrant Dink was assassinated, among others, and Article 301 of the Turkish Penal Code is still in place. This proves that the last step of Genocide-denial, is still in progress. Until Turkey itself creates a "human rights culture", reconciliation is in limbo.

Leonardo G. Torosian, "Levon Shant-Pegor Ashod" Chapter



**AYF Canada Youth Corps
Camp Vanadzor**

APPLY TODAY!

Send us an email or give us a call for more information, to make a donation, or to request an application:
youthcorps@ayfcanda.org
 647-966-2281





BARRY



KAREN



GARO

KAZANDJIAN



514

333-3000

DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE

12345, Beauséjour

RÉCEMMENT VENDU

3940, Bélanger

RÉCEMMENT VENDU

3061, rue Jean-Bouillet

À VENDRE 379 000 \$

3740, Pierre-Davault

À VENDRE 3 388 000 \$

2286, Kaufman

À VENDRE 349 000 \$

9033, Boul. Gouin O.

À VENDRE 1 950 000 \$

12211, Green Lane

À VENDRE 1 378 000 \$

12445, Av. Joseph-Edouard-Samson

À VENDRE 1 588 000 \$

83, des Roseaux

À VENDRE 1 198 000 \$

1533, Alexis-Nihon

À VENDRE 499 900 \$

4105, Claude-Henri-Grignon

À VENDRE 2 988 000 \$

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

CLASSÉS PARMI LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5